

Արարչի ութերորդ օրը

հեղինակ՝ Վահե Քաչա
թարգմանիչ՝ Ալ. Յովսյան
տպրուր՝ «Գիշտակցների խնջույքը»

✿

«Այդ տղայի անունը գրված էր ձյան վրա,
արևն այն հալեցրեց, իսկ ջուրը տարավ»:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

Երկու շաբաթ անձրևելուց հետո արևը երևաց: Ես կնոջս ուղեկցում եմ կայարան: Նա գնացքով մեկնելու է Նիցցա, ուր մի շաբաթ հետո կմիանամ նրան, երբ Մորեստը Փարիզում կլինի ու կաշխատի կլինիկայում: Ամեն տարի այս ժամանակ իմ հիվանդներին վստահում եմ նրանն մեկ ամսով արձակուրդ եմ վերցնումն մեկնում դեպի Կոտ դ'Ազյուր, որտեղ ամառանոց ունեմ: Մորեստը շնորհալի վիրաբույժ է, աշխատում է Լիոնի հիվանդանոցներից մեկում: Նա Փարիզը սիրում է օգոստոս ամսին: Աշխատանքն էլ ծանր չէ. երեսուն օրվա ընթացքում չորս կամ հինգ վիրահատություն:

Սյուզանը տեղավորվում է կուպեում: Նրան մի քանի թերթ եմ բերում. ճանապարհորդությունը երկար է: Մեծ ցանկություն ունեմ նրա կողքին մնալ, և թողնել, որ վագոնը ինձ հասցնի մինչև ծով: Եվս մեկ շաբաթ համբերություն, և ես

PDF Eraser Free

մեքենայով կլինեն այնտեղ: Սյուզանը ժամանակ կունենա բնակարանը կարգի բերելու: Նա կարող էր մինչև այս անձրևոտ շաբաթները գնալ, բայց գերադասեց մնալ ինձ հետ, և ես ասացի, որ բախտս բերում է: Քսան տարի է անցել մեր ամուսնությունից, բայց նրա աչքերի փայլը դեռ չի փոխվել: Մեր զգացմունքները նույնպես: Քառասունութ տարեկան եմ, սակայն նույն ջերմությամբ եմ սիրում նրան:

— Դու միանգամի՞ց կգաս հիվանդանոց:

— Ժամը ուրն է: Հինգ րոպեից քո գնացքը մեկնում է: Ես գոնե մեկ անգամ տիկին Կորբյեից առաջ կմտնեմ հիվանդանոց:

Տիկին Կորբյեն երկար ժամանակ է, ինչ աշխատում է ինձ հետ: Նա բոլոր վիրահատությունների ժամանակ օգնում է ինձ: Նրա ներկայությունը հուսադրող է:

— Մնաց երկու րոպե:

Օգոստոսի այս օրերին Լիոնի կայարանը լեփլեցուն է: Գնացքներն իրար ետևից մեկնում են: Ուղևորները լի են երջանիկ անհամբերությամբ: Լրագրավաճառուհին պաշարված է ճամպրուկներով և ճանապարհորդներով: Շուրջս տիրող այս եռուզեռը ի վերջո արբեցնում է ինձ: Ես նույնիսկ ներողամտորեն թույլ եմ տալիս, որ ինձ հրեն:

— Ցտեսություն՝ն:

Վերջին անգամ սեղմում եմ Սյուզանի ձեռքը: Գնացքը դանդաղ սահում է ռելսերի վրայով: Եվս մի սուլոց, և ես նստած եմ իմ մեքենայի մեջ, հանգստացած գլխով ու երջանիկ, որ ապրում եմ: Մի շաբաթ հետո ես նորից կտեսնեմ ծովը և ինձ համար այնքան սիրելի ծովափը:

Իմ կլինիկան Բուլոնյան անտառի մոտ է: Ծանրաբեռնված երթևեկության պատճառով մեքենան դանդաղ եմ վարում: Կարծես բոլոր մեքենաներն այսօր ժամադրվել են Լիոնի կայարանի մոտ: Կես ժամ է պետք, որպեսզի հասնեմ ՍենԼագար: Ես կանգնում եմ կրպակի առջև և մի գավաթ գարեջուր խմում: Արևը, որ երկու շաբաթ խռովել էր, այժմ բաց թողածը փայլուն կերպով լրացնում է: Ամեն ինչ տոնական տեսք ունի: Թուլացնող մթնոլորտ: Դյուպոնի մոտ վաղ առավոտից հոսում է գարեջուրը: Երիտասարդներն իրենց ճամպրուկներով հավաքվել են երաժշտական մեքենայի շուրջը: Նրանք սպասում են, որ մեկնելու ժամը հասնի: Շրթունքներս թրջում եմ փրփրոտ գարեջրով: Ինձ թվում է, թե քսան տարեկան եմ:

•
Ի՛նչ համեմատություն փողոցների երթևեկության հետ: Այստեղ կատարյալ լռություն է: Բուժքույրերը քայլում են ոտքի ծայրերին, և երբեք նրանց ձայնն այսքան հեռավո չի թվացել, երբ կողքովս անցնելիս շշնջում են:

— Բարև, բժիշկ...

Մի դուռ եմ բացում: Հիվանդը, որին երկու օր առաջ եմ վիրահատել, ձեռքերը կրծքին խաչած, պառկած է: Նա սպասում է: Մենք սպասում են վերքի վերջնական

PDF Eraser Free

սպիացմանը: Գանգի վնասված էր: Վիրահատումն օգնեց... Դուռը զգույշ ծածկում եմ: Երեք հիվանդ կողքի սենյակում են: Ես վախենում եմ նրանց արթնացնել, ուստի գնում եմ իմ աշխատասենյակը: Մի պահ թեքվում եմ պատուհանին: Աղջիկների մի խումբ մտնում է անտառ: Նրանց աղաղակներն արձագանքի պետս հասնում են ինձ և հազարավոր զգացումներ արթնացնում: Ըստ երևույթին, հիվանդանոցն այսօր ընկճեց ինձ: Արձակուրդի կարիք եմ զգում: Այս պահին Սյուզանը պետք է հասած լինի Սանս:

— Բարև, բժիշկ:

Տիկին Կորբյեն է: Նա զարմացած չէ, որ առավոտ շուտ իրեն աշխատասենյակում է տեսնում: Սովորաբար ես կլինիկա եմ գալիս կեսօրվա մոտ: Մեծ մասամբ, եթե անհրաժեշտություն չի լինում, վիրահատում եմ կեսօրից հետո, մոտ ժամը երկուսին:

— Տիկինը մեկնե՞ց:

— Հենց նոր ուղեկցեցի կայարան:

Տիկին Կորբյեն ծնվել է հիվանդապահ լինելու համար: Նա այդ գործի բոլոր տվյալներն ունի. կանոնավոր դիմագծեր, լավ առողջություն, մշտաժպիտ և նվիրված: Եկող շաբաթվանից մեկ ամիս արձակուրդ է վերցնելու:

— Առայժմ, բժիշկ:

Բաց պատուհանից ինձ են հասնում աղմուկն ու ծիծաղը: Մի սիգարետ է վառում:

•

Նոր սիգարետ վառելու պահին, մի ծանոթ աղմուկ ճեղքում է օդը. ուստիկանության ազդանշանն է: Հավանաբար դժբախտ պատահար է: Ես չեմ շարժվում՝ հուսալով, որ աղմուկը կհեռանա: Մեքենան կանգնում է: Ազդանշանը շարունակվում է: Մի քանի ուստիկան եմ նկատում: Մեքենան ներս թողնելու համար բացում եմ դարբասը:

— Բժի՛շկ:

Տիկին Կորբյեն բացում է դուռը: Ուստիկանական մեքենան կլինիկայի առջև հազվադեպ է կանգնում:

— Գալիս եմ:

Միջանցքում սպասում եմ բարձրացող վերելակին: Դռները բացվում են պատգարակի վրա: Արյունոտ գլխով մի մարդ է պարկած:

— Ավտովթար է, ասում է ուստիկանը: Կարծում եմ, լուրջ է, անհետաձգելի: Եվ քանի որ ձեր կլինիկան ընկած էր մեր ճանապարհին...

Երկու հիվանդապահ ավտովթարի ենթարկվածին տանում են վիրահատման սրահ: Տիկին Կորբյեն գործիքներն արդեն պատրաստել է: Ես գնում եմ վիրավորին: Տղամարդ է, երեսունին մոտ: Նա տեսքից ամուր է, բայց լուրջ է վնասվածքը: Գանգի ճեղքվածք: Արյունը լերդացել է մազերին: Ջննում եմ մոտիկից: Դեռ շնչում է: Պետք է բացել գանգը: Հարկավոր է շտապել: Հագնում եմ խալաթը, ձեռնոցները: Ես

PDF Eraser Free

պատրաստ եմ: Անհրաժեշտ է մաքրել լերդացած արյունը, փոշին, փշրված ոսկորները ...

Գլուխս բարձրացնում եմ: Տիկին Կորբյեի հայացքը հանդիպում է ինձ: Մի անգոր շարժում: Մարդն արդեն մահացած է: Գործիքներն առանց օգտագործելու դնում եմ տեղը:

— Հայտնեք ոստիկաններին:

Ես նայում եմ վիրահատման սեղանին դրված այս անշարժ զանգվածին: Նայում եմ այս մահացած մարդուն ու մտածում կայարանի անցուդարձի և այն ծիծաղող աղջիկների մասին, որոնք վազում են անտառում: Կոպերը փակելուց առաջ, նկատում եմ, որ նրա աչքերը կապույտ են:

— Ոստիկանները գնացել են: Նրանց ասել էին, որ վիրահատությունը երկար կտևի:

Ես նույնիսկ չեմ բողոքում: Ի՞նչ օգուտ:

— Ընտանիքին հայտնեք:

Նրա փաստաթղթերը դրված են սեղանին, հեռախոսի մոտ: Թերթում եմ: Մարկ Դյուման, ծնվել է 1927 թվականի մարտի 2ին, ինժինեթ, բնակվում է Ալեգիա փողոցում: Հեռախոս՝ GOB4017:

Տիկին Կորբյեն արդեն հավաքում է համարը: Նրա մատները չեն դողում: Հեռախոսի սկավառակը դանակի պես չոր աղմուկով պտտվում է:

— Ալո, GOB4017 է՞:

Վերցնում է լսափողը: Պատասխանում է կանացի մի ձայն: Տիկին Կորբյեն հագում է: Նա հուզվում է ավելի, քան ենթադրում եմ:

— Տիկին Դյուման՞ն է լսում:

— Ես եմ:

— Դոկտոր Քերյանի կլինիկայից է:

Հեռախոսալարի մյուս ծայրում ձայնը փոխվում է:

— Կլինիկայից: Ինչո՞ւ:

Տիկին Կորբյեն վարանում է:

— Կուզե՞ք հասցեն վերցնել: Բուլվար Մորիս Բարես, Նոյիյում:

— Ինչո՞ւ, ինչո՞ւ:

— Ձեր ամուսինը քիչ առաջ ավտովթարի է ենթարկվել: Կուզե՞ք այստեղ գալ:

— Մա՞րկը:

— Դուք հասցեն վերցրի՞ք: Ես կրկնում եմ:

PDF Eraser Free

- Վնասվածքը լո՞ւրջ է:
- Մենք ձեզ սպասում ենք:
- Մի՛ կախեք, ասե՛ք իձն... Ես հենց հիմա կգամ:

Տիկին Կորբյեն դանդաղ իջեցնում է լսափողը:

•

Պատուհանի մոտ տազնապով սպասում եմ տիկին Դյումանին: Կեսօր է: Սյուզանը պետք է հասած լինի Լիոն: Այս ժամին անցորդները հազվադեպ են փողոցում: Ծառուղիով մի քանի հեծյալներ են վարգում: Հանկարծ մի տաքսի է կանգնում կլինիկայի մոտ: Սրտի տրոփյունով տեսնում եմ, թե ինչպես մի կին է իջնում: Վարորդի հետ հաշիվը փակելիս հայացքը չի կտրում կլինիկայից: Նետվում է դեպի մուտքը: Տիկին Կորբյեն ընդունարանում սպասում է նրան: Բուժքրոջը խնդրել էի Մարկի վերքը մաքրել և գլուխը մաքուր վիրակապով փաթաթել: Անցնում է մի քանի րոպե: Ես հետևում եմ վերելակի աղմուկին: Ինչո՞ւ չի բարձրանում: Նրա ամուսնու մարմինը հարևան սենյակում է: Անվերջ թվացող հինգ րոպե: Հետո՛ քայլերի ձայն եմ լսում: Տիկին Կորբյեն է: Նա այլայլված է: Նրան երբեք այդ վիճակում չեմ տեսել:

- Ուզում էր ինքնասպանություն գործել:

Լռություն:

- Լուրը նրան ինչպե՞ս հայտնեցիք:

— Բերանս դեռ չէի բացել, արդեն գուշակեց: Կարծում եմ քույրերից մեկն է ասել: Ընդունարան մտնելուն պես նետվեց դեպի պատուհանը: Ես ճիշտ ժամանակին բռնեցի նրան: Ի՞նչ անենք: Նա ցնցված է ...

Լռեց: Ավելի լավ է ես խոսեմ հետը:

- Բերեք իմ աշխատասենյակը:

Քիչ հետո դուռը բացվում է: Տիկին Դյումանը ներս է մտնում: Երիտասարդ է, քսանհինգ տարեկան: Նա բռնել է ստամոքսը, շնչահեղձ է լինում: Նրա աչքերը չոր են: Ես խոսք չեմ գտնում ասելու:

- Ձեր ստամոքսը ցավո՞ւմ է:

Նա բացասաբար շարժում է գլուխը: Նրա վարքը տարօրինակ է թվում ինձ: Մոտենում եմ, շոշափում որովայնը: Մկանները կծկված են, ինչպես կույր աղիի նուպան բռնելիս: Տիկին Կորբյեն նայում է ինձ:

- Նստեցեք, խնդրեմ:

Նրա շրթունքները սեղմվում են.

- Ես ուզում եմ ճշմարտությունն իմանալ:

PDF Eraser Free

Մնում է քարացած: Չի շարժվում: Բաց գույնի շրջագգեստով նման է արձանի: Դիմագծերը նուրբ են: Անշարժ աչքերը չեն լքում ինձ: Ժամանակն է, որ ես մի երկու խոսք ասեմ:

— Երեխաներ ունե՞ք:

Ոչ մի արձագանք: Տիկին Կորբյեն տարուբերում է գլուխը: Երեխաներ չունի: Կարիք կա՞ ճշմարտությունն ասելու: Հանկարծ մի անսովոր կայծ է փայլում նրա աչքերում: Այդ առկայծումը ծանոթ է ինձ: Ես համոզված եմ. լուրը լսելիս, այդ փխրուն կինը, որ ցավագին բռնել է փորը, ինքնասպանություն չի գործի: Իմ պատուհանը բաց է: Նրա մկանները կծկված են: Ես վախենում եմ նրա ջղերից: Կոհմանա՞ն արդյոք հարվածին: Ես լրջորեն վախենում եմ: Արդյոք դրանից հետո տիկին Կորբյեն ստիպված չի՞ լինի խելագար հանելու այս սենյակից: Հիմա ես միայն մի ելք եմ տեսնում: Մի քանի ժամից հետո կպարզվի, թե ինչ կլինի: Ես դժվարությամբ արտասանում եմ.

— Ձեր ամուսինը դեռ ողջ է:

Թերթություն է իջնում: Նա ընկնում է բազկաթոռին: Վերցնում է իմ առաջարկած սիգարետը: Ձեռքերը դողում են: Ես կուզեի նրան տեսնել արցունքներով ողողված: Լացը կթեթևացներ: Բայց նրա աչքերը մնում են չոր: Երբեմներբեմն չար բռնկումներ են երևում այնտեղ:

— Վիրահատե՞լ եք:

— Ոչ:

Խուզարկու հայացքով նայում է ինձ: Ավելացնում եմ.

— Կոմայի մեջ է:

— Կարո՞ղ եմ նրան տեսնել:

Մի պահ վարանում եմ:

— Ուզում եմ նրան տեսնել, բժիշկ:

— Եկեք:

Առաջնորդում եմ նրան միջանցք: Բացում եմ դուռը: Մարկը, փաթաթված գլխով, ընկած է մահճակալին: Ասես քնած լինի: Կինը մի քայլ է անում դեպի մահճակալը, կանգնում, դառնում է ինձ.

— Ե՞րբ եք մտադիր վիրահատել: Արդյոք անհրաժե՞շտ է:

Ճերմակ սավանները, մաքուր վիրակապը, Մարկի հագուստն այնպես է դասավորված աթոռին, որ կարծես պետք է օգտագործվեն և դրանով էլ հույս են ներշնչում:

Կինը թեթևացած վերադառնում է իմ աշխատասենյակը: Նորից հարցնում.

PDF Eraser Free

— Արդյոք վիրահատությունը անհարժե՞շտ է:

Մեղավո՞ր եմ ստելուս համար: Ինչպիսի՞ն կլինի հակազդեցությունը ճշմարտությունը լսելու պահին: Հակասական մտքերը բախվում են իմ ուղեղում: Քանի՞ տարի է, որ չեի վարանել: Ճշմարտությունը, իսկույննե՛թ:

Մի մեծ հոգնություն պարուրում է ինձ: Ես խղճում եմ այս գեղեցիկ, երիտասարդ, սիրազեղ կնոջը: Անձրևին հաջորդած այս արևի հետ մահն ավելի ողբերգական է թվում: Ես պատասխանում եմ.

— Առայժմ վիրահատումը կարելի է հետաձգել: Բայց պետք է ձեզ հայտնեմ, որ նրա վիճակը լուրջ է:

— Բայց և այնպես դուք նրան կբուժեք: Նա դուրս կգա այդ վիճակից...

Լռում եմ:

— Մարկը երիտասարդ է և ամրակազմ: Այս առավոտ մեքենա նստելիս...

Նա հանկարծ լռում է:

— Լսեք: Վերադարձեք տուն: Ձեր հեռախոսի համարը գիտեմ: Այս երեկոյից սկսած ձեր նորություններ կհայտնեմ:

Նա միանգամից վեր է կենում և կարծես գլխի ընկնելով, որ իմ աշխատասենյակը սպասարահ չէ, ուղղվում է դեպի դուռը:

— Խոստանում եմ ձեզ զանգահարել:

Չեմ համարձակվում ավելացնել՝ «հանգիստ եղեք»:

— Ես չեմ կարո՞ղ Մարկի կողքին մնալ:

— Խոհեմ եղեք:

— Ես նրան չեմ անհանգստացնի:

— Անկարելի է:

Նա շարժում է շրթունքները, պտտում բռնակը: Մնում է միջանցքում, պատին կպած, Մարկի սենյակի դիմաց:

Մեկ ժամ հետո տիկին Կորբյեն մտնում է իմ աշխատասենյակ:

— Նա դեռ այնտեղ է, բժիշկ: Ի՞նչ անեմ:

— Դեռ համբերեք:

Գնում եմ հիվանդներին նայելու:

Միջանցքում կանգնած է տիկին Դյումանը՝ ձեռքերը մեջքին, պատին հենված: Նրա հայացքը դատարկ է: Ես անցնում եմ նրա կողքով, առանց որևէ ուշադրություն շարժելու:

PDF Eraser Free

Իմ ստուգայցը երկար չի տևում: Աշխատասենյակի մոտ տիկին Դյումանը դառնում է ինձ.

— Բժիշկ, դուք չե՞ք քննելու իմ ամուսնուն:

Մնում եմ տեղումս մեխված: Վերականգնում եմ սառնասրտությունս:

— Այսօր կեսօրից հետո նրան կնայեմ: Դուք չե՞ք ուզո՞ւմ վերադառնալ տուն:

Չի պատասխանում:

— Եկեք միասին նախաճաշենք: Երկուսն անց է:

— Քաղցած չեմ:

Չեմ ստիպում: Առանց ախորժակի գնում եմ նախաճաշելու:

Ժամը չորսն է: Մի քանի նշումներ եմ կատարում 18րդ դարի վիրաբուժության վերաբերյալ: Նոյեմբերին կայանալիք խորհրդակցության համար հարկավոր է տվյալներ ճշտել:

Փողոցում երթևեկությունն աշխուժացել է: Մեքենաներն շտապում են դեպի հարավային խճուղի: Բոլորը մեկնում են: Մի քանի օր հետո լքված Փարիզը կմնա սուրիստների: Քիչ առաջ Լիոնից զանգահարեց Մորեստը: Հինգ օր հետո նա կլինի Փարիզում, և ես հնարավորություն կունենամ նախատեսված ժամկետից շուտ մեկնել:

Հանկարծ հիշում եմ տիկին Դյումանին: Արդյոք նա Փարիզում է մնալո՞ւ: Ազգականներ ունի՞: Վեր եմ կենում: Բացում եմ դուռը: Պետք է վերջ տալ այս ամենին: Արդյոք իմ կողմից ստորություն չե՞ նրան զուր հույսերով սնելը: Նրա ամուսինը մեռած է: Ամեն ինչ վերջացած է: Ես նրան տեսնում եմ նախկին դիրքով, ոտքի վրա: Տիկին Կորբյեի տված ամսագրերը ընկած են աթոռին: Նրա հայացքն ինձ վախեցնում է:

— Կբարեհաճեի՞ք մտնել:

Ափսոսանքով անջատվում է պատից ու մտնում իմ աշխատասենյակը: Յույց եմ տալիս բազմոցը: Նստում է:

— Դուք իմ գործը դժվարացնում եք:

— Ինչո՞ւ:

Իսկապես, ինչո՞ւ: Զգում եմ, որ տարվել եմ իմ ստով: Ես նրա հետ այնպես եմ խոսում, ասես ամուսինը դեռ կենդանի է: Փոխում եմ խոսելուս տոնը:

— Ծնողներ ունե՞ք Փարիզում:

— Ծնողներս մահացած են: Մարկից բացի ուրիշ ոչ ոք չունեմ:

Դարակում փնտրում եմ ծխամորձա: Առանց շտապելու լցնում եմ:

— Իսկ Մարկի ծնողնե՞րը:

— Նրանք Կանադայում են:

PDF Eraser Free

— Եղբայր, քույր ունե՞ք:

— Միայն Մարկը:

— Քանի՞ տարեկան էիք, երբ ձեր ծնողները մահացան:

— Ես շատ ջանեի էի: Որոշ ժամանակ մնացի մորաքրոջս մոտ, հետո հանդիպեցի Մարկին:

Վառում եմ ծխամորճա: Ծուխը ծուլորեն ոլորվում է:

— Ձեր մորաքույրը դեռ ո՞րջ է:

Հայացքը դանդաղ ուղղում է ինձ.

— Ինչո՞ւ եք այդ բոլորը հարցնում: Ես ամեն ինչ ասացի, Մարկը, ուրիշ ոչ ոք...

— Լսեք...

Ես չեմ ուզում նրան հանկարծակիի բերել, բայց անհրաժեշտ է որոշ ճշմարտություններ բացել:

— Մարկը մյուսների պես մի մարդ է: Նա էլ մսից ու արյունից է: Պատուհանից նայեք և հազարավոր մարդկանց կտեսնեք, որոնք Մարկի նման են: Դուք, ես, հիվանդապահները, բոլորս: Արյունից, մկաններից, նյարդերից, ուղեղից ենք: Մի գեղեցիկ մեքենա, բայց ենթակա առաջին իսկ պատահարին: Մենք անկարող ենք դրա դեմ: Ոմանք հասնում են վերջնակետին, ոմանք էլ ճանապարհին են մնում:

Իրեն Դյումանը համառորեն շարժում է գլուխը:

— Մարկը կբուժվի:

Դատարկում եմ ծխամորճա: Ծխախոտը դեռ առկայծում է մոխրամանում:

— Ենթադրենք, նա աղետի է ենթարկվել: Ես ձեզ ասացի, նրա վիճակը լուրջ է:

— Նա դուրս կգա այդ վիճակից: Այլապես...

— Այլապես ի՞նչ:

— Ոչինչ: Ես ուզում եմ նրան տեսնել:

— Ո՛չ: Բայց դուք կարող եք մնալ իմ աշխատասենյակում:

— Ես գերադասում եմ սպասասրահը:

Գնում է դուրս:

Կիսաբաց դռան միջով ես տեսնում եմ Իրեն Դյումանի կիսադեմը: Նա հրաժարվել է ամեն տեսակի սնունդից: Շարունակ ոտքի, ձեռքերը թիկունքին, մեջքը թեթևակի կքած, ասես պարմանուհի լինի: Նրա աչքերը սևեռված են այն սենյակի դռանը, որտեղ պառկած է Մարկը: Ես չեմ համարձակվում բացել այդ դուռը: Ես իրավունք չունեմ այդ աստիճան խաբելու: Տիկին Կորբյեին եմ ուղարկում: Նա մտնում է ու նորից դուրս է գալիս: Նրա այցելությունը հանգստացնում է Իրեն Դյումանին: Երկու ժամ հետո,

PDF Eraser Free

այսինքն՝ կլինիկայից դուրս գալուց առաջ, հարկավոր է մի բան որոշել: Մահվան ինդիքը իմ գիտակցության մեջ երբեք այս կերպ չէր դրվել: Ես պրպտում եմ հուշերս: Քսան տարվա ընթացքում, այս կլինիկայի մեջ, ոչ ոք այնպես չէր վարվել, ինչպես այս կինը: Պատահել է, որ հաճախ մխիթարել եմ որևէ անհաջող վիրահատվածի ազգականներին, բայց երբեք չեմ ցուցաբերել այսպիսի թուլություն, որի դեմ այժմ պայքարել եմ փորձում:

Հոսող ժամերի հետ ջլատվեց նաև իմ կամքը: Բայց, աստված իմ, այսօր եղանակն ինչո՞ւ է այսքան բարեհաճ: Անտառից ինձ հասնող ձայներն ինչո՞ւ են ուրիշ տեսակ հնչում: Արձակուրդների, մարդկանցով լցված կայարանների, անտառում զբոսնողների հետ մահվան գաղափարը չի խարսխվում իմ ուղեղում: Չեմ ուզում հավատալ, թե բավական է մի արյունահոսություն, որպեսզի կյանքի թելը կտրվի: Չեմ ուզում հավատալ, որ մի անզգույշ ակնթարթը մեքենայում՝ կարող է երկու սիրող էակներ անջատել: Այնուամենայնիվ, ես ստիպված եմ ընդունել, որ ինձնից ոչ հեռու մի մեռած մարդ կա, որը հարություն է առնում իմ ստով: Ես վճռում եմ.

Կլինիկայից դուրս գալուց հետո, Իռեն Դյուման՝ անհուսության ծանրությունը չեք զգա ձեր ուսերին: Ձեր սիրտը հավերժորեն չի փակվի: Դուք ինքնասպան չեք լինի: Ձեր նյարդերը կդիմանան այդ հարվածին: Դուք կվերագտնեք ձեզ: Ես իմ սուտը ժամանակավորապես կպնդեմ և կկարողանամ ձեզ հաշտեցնել կյանքին՝ առանց Մարկի:

Սյուզանը պետք է տեղ հասած լինի: Ամբողջ ձմեռվա ընթացքում տունը մնացել է փակ: Գործն անպակաս է: Բարձերը հարկավոր է պատշգամբ հանել, փոշին մաքրել, ճամպրուկները դասավորել: Սյուզանը սիրում է իր աշխատանքային օրակարգը: Եկած օրվանից սկսում է իր շուրջբոլորը կարգի բերել: Ես վաղ առավոտյան կզանգահարեմ նրան:

Այս որոշումն ինձ անմիջապես հանգստացնում է: Ջգում եմ, որ չեմ սխալվում: Իրեն Դյումանը երիտասարդ է, նա կարող է վերակառուցել իր կյանքը, բայց պետք է որ հենարան տամ նրան: Պետք է, որ նոր աչքերով, առանց իր ամուսնու՝ վերագտնի կյանքը: Իմ անելիքը հեշտ չէ: Իրենը նման է մի վիրավոր գազանի: Ես ոչինչ չկարողացա անել նրա ամուսնուն փրկելու համար: Սակայն Իրենին ես կբուժեմ:

Միջանցքում, ինձ տեսնելով, նա շտկվում է: Նրա շրթունքները սեղմվում են: Առանց վարանելու բացում եմ դուռը և հայտնվում Մարկի սենյակում: Շերտափեղկերն իջեցված են: Սենյակում դատարկություն է բուրում: Ես թեքվում եմ դիակի վրա: Փոխում եմ մարմնի դիրքը: Հետո բացում եմ դուռը և Իրենին մոտենալու նշան անում: Մի աննշան մանրամասն ինձ տակնուվրա է անում. սենյակ մտնելուց առաջ Իրենը հենվում է բռնակին և հանում կոշիկները՝ ոտնաձայները խլացնելու համար: Ներս է մտնում բոբիկ ոտքերով և անկողնի առջև անշարժանում: Ծանր պատկեր է: Ձեռքս դնում եմ Իրենի ուսին և տանում միջանցք: Նա հագնում է կոշիկները: Արդյոք նրան բնական է թվում Մարկի նոր դիրքը՝ աջ կողքին պարկած: Անշուշտ, քանի որ այդ մասին հարցեր չի տալիս:

PDF Eraser Free

— Բժիշկ, կարո՞ղ եմ ձեզնից մի շնորհ խնդրել:

Նա հիմա ավելի խաղաղ է թվում:

— Ասացեք:

— Ես կուզեի գիշերն ամուսնուս մոտ անցկացնել:

Ես այդ սպասում էի: Մտածում եմ:

— Մի պայմանով: Նախ, կգաք ինձ հետ ճաշելու:

Նրա կոպերն իջնում են, կարծես պատրաստվում էր ասելու. «Ես քաղցած չեմ», բայց համաձայնում է:

— Շնորհակալություն, բժիշկ:

•

Նա անխոս, պարապ հայացքով, կծկվեց մեքենայում: Որոշում եմ նրան ճաշելու տանել մի նավճաշարան, հետո մտադրությունս փոխում եմ: Մենք կճաշենք Էյֆելյան աշտարակի ռեստորանում: Նրա կարծիքը չեմ հարցնում, քանի որ կռահում եմ պատասխանը: Նրա համար միևնույն է:

Լույսերով ողողված Շանգեյիզում մեծ բազմություն կա: Բոլոր տուրիստները ժամադրվել են Էտուալում: Իրենը ոչինչ չի նկատում, կարծես տափաստանով անցնելիս լինենք: Հասնում ենք Էյֆելյան աշտարակ: Նա ինձ հնազանդորեն հետևում է և վերելակում հարցնում.

— Հիվանդապահները գիտե՞ն, որ դուք այստեղ եք:

— Ես հիմա կզանգահարեմ կլինիկա: Անհրաժեշտության դեպքում նրանք ինձ կկանչեն:

Դա արդեն սովորություն է: Քսան տարուց ի վեր, ամեն երեկո ես իմ բացակայությունն այսպես եմ ապահովում:

Մենք տեղավորվում ենք մի խաղաղ անկյուն: Սրահը կիսով չափ դատարկ է: Իրենը աչք է ածում կերակրացանկը և դնում պնակի վրա:

— Ընտրեցի՞ք:

Նա բացասաբար շարժում է գլուխը:

— Քաղցած չեմ:

— Դուք երեխայի պես եք ձեզ պահում:

— Քաղցած չեմ:

Չեմ ընդդիմանում: Կանչում եմ մետր դ՝Օթելին:

— Տիկինը ճաշել է: Ինձ տվեք արտիշոյի միջուկներ, մի շերտ սաղմոն և տապակած հավ: Եվ մի շիշ շամպայն:

PDF Eraser Free

Ծխախոտի տուփը դնում եմ սեղանին: Մի՞թե իմ առաջին փորձը պիտի ձախողվի: Օ՛, ես գիտեմ, որ մասնակցելով այս ճաշին, դրությունը չենք փոխի, բայց կուզենայի, որ նա ախորժաբեր խորտիկներ ճաշակեր, որպեսզի մի պահ շեղվեր ուշադրությունը: Բայց փորձությունների լանջին՝ հրել պետք չէ: Մաղմոնը համեղ է: Նրա վարքը հուսահատեցնում է ինձ, և ես խուսափում եմ երկրորդ անգամ հրավեր անել: Կարողանում եմ նրան մի փոքր շամպայն խմեցնել և վերջացնում եմ ճաշս: Մենք տերրաս ենք դուրս գալիս: Օդը հեշտալի է: Փարիզը մեր ոտքերի տակ նմանվում է մակետի: Լույսերն ամենուրեք թարթում են: Այցելուները հավաքվում են մեր շուրջ: Կարծես Բաբելոնի աշտարակը լինի: Իրենը նայում է աստղերին, թարձրացող շենքերին, որոնք քաղաքն են կազմում: Այս շենքերի անհամար լուսավոր պատուհանների ետևում ստվերներ են շարժվում: Արդյոք այս պատկերով չէ՞ր, որ ուզեցի նրան հողից կտրել: Ես, իհարկե, գործել եմ անգիտակցորեն: Իմ միակ հատուցումն էր նրա շրթունքների շարժվելը տեսնել:

— Ի՛նչ փոքր է այս ամենը...

Ես նրան թողնում եմ խորհել այնքան, մինչև որ մեկը կանչում է ինձ: Հանդերձապահն է: Ես նրան նշան եմ անում:

— Բժիշկ Քերլյան, ձեզ սպասում են կլինիկայում:

— Շնորհակալ եմ:

Իրենը բռնում է ձեռքս: Նա համոզված է, որ գործը իր ամուսնուն է վերաբերում: Ինչպե՞ս հասկացնեմ, որ ոչինչ չկա: Հանդերձապահը կապվեց կլինիկայի հետ և կախեց հեռախոսը:

— Գնանք տեսնենք:

— Ի՞նչ կարող է պատահած լինել նրան, բժիշկ:

Վստահեցնում եմ նրան: Գուցե գործը անցած օրվա վիրահատվածին է վերաբերում: Գուցե նրա վիճակը վատանում է: Արյունահոսություն:

Քառորդ ժամ անց հասնում ենք կլինիկա:

Վերելակից դուրս գալիս, նա բռնում է թևս:

— Դիմացն է, բժիշկ:

Մի բուժքույր ինձ հայտնում է, որ սպասում են վեցերորդ հիվանդասենյակում: Իրենը շունչ է քաշում: Ես նրան խնդրում եմ աշխատասենյակում սպասել և գնում եմ հիվանդին այցելելու:

Կես ժամ հետո նրան գտնում եմ միջանցքում:

— Լո՛ւրջ էր:

— Երբ գլխի վիրահատություն է, խնդիրը միշտ լուրջ է:

PDF Eraser Free

Ես կշռադատում եմ խոսքերս.

— Ամենափոքր վարակը, ամենափոքր արյունահոսությունը մահ է: Մենք անզոր ենք դրա դեմ:

Իրենը լարված դեմքով, համառորեն նայում է ինձ, հետո, մի քաղցր ձայնով, որ մինչ այդ չէի նկատել, ասում է.

— Մարկը դուրս կգա այդ վիճակից, այդպես չէ՞:

Հոգնաբեկ ես պատրաստվում էի ամեն ինչ խոստովանել, բայց այդ քաղցր ձայնը ինձ զինաթափում է.

— Մի կերպ դուրս կգանք:

Կեսգիշերն անց է: Վերցնում եմ պայուսակս և Իրենին տանում դեպի վերելակ:

— Դուք խոստացաք, որ ես Մարկի կողքին կմնամ:

— Ո՛չ այսօր, ո՛չ այս երեկո: Դուք նրան կխանգարեք: Վաղը...

Նրան նստեցնում եմ մեքենա: Հասնում ենք Ալեգիա փողոց՝ Իրենի տուն: Իջնում է, մի պահ կանգ առնում:

— Բարի գիշեր, բժիշկ: Շնորհակալություն:

Ես գլխով պատասխանում եմ, քանի որ խոսելու ցանկություն չունեմ: Վերադառնում եմ տուն: Սյուզանի բացակայությունն ինձ նեղում է:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

Առավոտյան իմ վարքն ինձ թվում է անհեթեթ: Մահացել է մի մարդ: Կինը եկել է կլինիկա: Իմ պարտքն է նրան ասել ճշմարտությունը: Ես չեմ ակրող դիակը երկար ժամանակ պահել և հաստատել իմ սուտը: Գոնե հոգեվարքի մեջ լինեք, գոնե հազար հույսից մեկը լինեք... Բայց նա մեռած է, իսկապես մեռած: Կինը վաղ թե ուշ կիմանա այդ մասին: Գուցե նա նույնիսկ զայրանա՝ ճշմարտությունն իրենից թաքցնելու համար:

Բացում եմ փեղկերը, և արևը ողողում է սենյակը: Փակ պատուհաններով ավտոբուսը պտտվում է Վիկտոր Հյուգոյի հրապարակում: Այս ժամին Սյուզանը պետք է որ տեղավորված լինի ծովահայաց պատշգամբում:

Ժամը ութն է: Սուրճս կխմեմ այստեղ: Ես մտածում եմ խոհանոցի մասին, այն մտադրությամբ, որ հեռախոսի մոտով անցնելիս մահվան լուրը հայտնելու համար, տիկին Դյումանի համարը կհավաքեմ: Ճիշտ չե՞մ միթե: Յուրաքանչյուր ընտանիքում մեկը մյուսից առաջ է մահանում: Պետք է կարողանալ հաշտվել դրան: Ես վերհիշում եմ համարը. GOB4017: Հեռանում եմ պատուհանից և հեռախոսի մոտ մի բուռ արև եմ տեսնում: Հեռախոսը հայելու պես փայլելում է: Որոշում եմ խմել սուրճս:

PDF Eraser Free

Անկասկած արձակուրդի կարիք ունեմ, քանի որ գլխումս ներհակ մտքեր են պտտվում: Ամենապարզ լուծումը՝ նրան ճշմարտությունը հայտնելն է: Նա դրանից չի մահանա: Կիսելագարվի՞ արդյոք: Ինքնասպանության փորձ կանի՞: Ես ինձ պատկերացնում եմ նրա վիճակում: Զանգ: Վերցնում եմ լսափողը: Ինձ հայտնում են կնոջս մահը: Առաջին հարց, ինչպե՞ս մահացավ: Հեռախոսի տարբերակը համարում եմ չեղյալ: Դա շատ ստոր է: Մեքենայի պատահար: Ինչպե՞ս: Կինս շատ զգույշ է վարում: Մի ուրիշ մեքենա է պատահարի պատճառ դարձել: Ընդունեցինք: Ի՞նչ են արել: Շտապ օգնության մի մեքենա եկավ, որ նրան կլինիկա տանի, բայց արդեն ուշ էր: Նա մահացած է:

Սուրճի բաժակը դնում եմ տեղը և նկատում, որ չնայած վիրահատման քսան տարվա իմ փորձին, կնոջս մահը չեմ կարողանում ընդունել: Կընդունեի՞ արդյոք, եթե անկողնում մահացած լիներ: Իհարկե, ավելի հեշտ, բայց պատահարն այնքան անհեթեթ է: Տասնյակ հարցեր են ծնվում. ինչո՞ւ ավտոմեքենա նստաց: Եթե երկու բոլակ ուշ գանցած լիներ... դա հանդուրժելի չէ: Սուրճս դառնացել է: Վերցնում եմ լսափողը:

— Ես կուզեի զանգահարել Նիցցա:

Նկատում եմ, որ քրտնել եմ: Տազնապով սպասում եմ հինգ բոլակ, վստահ, որ մի օտար ձայն է ինձ պատասխանելու: Ոչ, դա Սյուզանի հանդարտ ձայնն է:

— Դո՞ւ ես, Անդրե:

Թողնում եմ, որ նա խոսի: Ըմբռնվում եմ նրա մտերիմ ձայնի երանգը: Վերջացնելով խոսակցությունը, ինձ գտնում եմ նույն կետում: Պե՞տք է արդյոք Իրեն Դյումանին հայտնել իր ամուսնու մահը, թե՞ մի փոքր էլ համբերել: Շարունակե՞լ սուտը, օրօրի լրջացնելով նրա ամուսնու վիճակը, օրօրի վրա հույսի մի բեկոր խլելով նրանից՝ հաշտեցնե՞լ մահվան մտքին: Գուցե:

•

Հասնելով կլինիկա Իրենին գտնում եմ միջանցքում: Նա հազել է ճերմակ, շատ պարզ մի շրջագգեստ: Գիշերը դեմքին նուրբ ակոսներ է փորել, որոնք ավելի են գեղեցկացրել նրան: Ես կարողություն չունեմ Իրենին խորհուրդներ տալու:

— Դուք նրան վիրահատելո՞ւ եք, բժիշկ:

— Առայժմ ոչինչ չեմ կարող ասել:

Ես կանչում եմ տիկին Կորբեյին, որպեսզի Մարկի վերաբերյալ հրահանգներ տամ: Մի քանի գրառումներ եմ անում:

— Եկեք:

Իրեն Դյումանը մոտենում է: Ես նրան ցույց եմ տալիս Մարկի անկողինը՝ մի թափանցիկ վերմակով ծածկված: Գլուխը հազիվ է երևում ծածկոցի տակից: Մարմինը փայտացած է: Մեռելային գույնը Իրենը չի նկատի: Ասում եմ.

PDF Eraser Free

— Ես նրան թմրացրել եմ: Սա մի միջոց է, որը վերացնում է մարմնի հակազդումները նյարդաբախումների ժամանակ: Եթե նյարդաբախումը չափավոր է, ուրեմն ամեն ինչ կարգին է: Եթե նյարդաբախումն ուժգին է, հակազդումը գերազանցում է մարմնի դիմադրողականությունը և ... ոչ ոք ոչինչ անել չի կարող:

Լռություն: Նա շարժում է շրթունքները:

— Մարկը կդիմադրի նյարդաբախմանը:

— Ես ձեզ ոչինչ չեմ կարող հավաստիացնել:

— Ես վստահ եմ:

Նա այդ խոսքերն այնպիսի համառությամբ է ասում, որ փշրում է սիրտս: Դուրս ենք գալիս սնեյակից: Ըստ սովորության, նրան թողնում եմ միջանցքում: Ես ետուսառաջ եմ անում իմ աշխատասենյակում:

— Իրեն:

Նա առանց հանկարծակիի գալու, բարձրացնում է գլուխը: Ես նրան այնպես եմ ընտելացել այս քսանչորս ժամվա ընթացքում, որ որոշում եմ անունով կանչել:

— Դուք միջանցքում մնալ չեք կարող: Խանգարում եք սպասարկող կազմին: Առանց ուզելու, խանգարում եք նաև ինձ: Եկեք, դուրս գանք:

— Մենք կվերադառնանք:

— Մենք կվերադառնանք:

Ես մտածում եմ նրան մորզ տանել և դիակներ ցույց տալ, ընտելացնել անշարժ նյութին, ստիպել, որ ձեռք տա Մարկի տարիքն ունեցող անկյանք, երիտասարդ, գեղեցիկ մարդու դեմքին: Այդպիսի մահ ամեն օր լինում է: Ի՞նչ պատճառ բռնել: Հանկարծ մտածում եմ կատակումների մասին և մեքենան ուղղում դեպի Դանֆերմոշըրոյի հրապարակը: Ցնցումն այնքան սաստիկ չի լինի:

— Հասանք:

Նա հնազանդորեն, առանց հարց տալու հետևում է ինձ: Նրան ամենուր կարող եմ առաջնորդել, պայմանով, որ վերադառնանք կլինիկա: Մուտքի մոտ տասներկու հոգի հերթի կանգանած սպասում են: Մի քանիսը զինված են զրպանի լապտերով: Անհոգ դեմք ունեն: Հետևում ենք գիղին՝ մի նիհար երիտասարդ, որը վզին թաշկինակ ունի փաթաթած: Իրենը քայլում է կողքիս: Ես նրան հարցնում եմ, թե մինչ այս եղել է կատակումներում: Նա բացասաբար շարժում է գլուխը: Երևում են առաջին ոսկրակույտերը: Նա կկոցում է աչքերը: Ռունգները կծկվում են: Ուշադրությամբ հետևում եմ նրան, չուզենալով ամենավորքը մանրամասն անգամ վրիպել: Մեզանից առաջ անցած գիղի ձայնը հազիվ ենք լսում: Շվեդացի մի տուրիստ լապտերը ման է ածում զարդերի պես շարված կոնքոսկրերի և գանգերի վրայով: Իրենը չի համարձակվում ինձնից մանրամասնություններ հարցնել: Ես նրան ասում եմ.

PDF Eraser Free

— Տուրաքանչյուր քայլափոխին մենք անցնում ենք տասնյակ տղամարդկանց և կանանց մոտով, որոնք քայլել են, որոնք կերել են, որոնք սիրել են իրար: Որքա՛ն վսեմ է, միաժամանակ որքան սովորական: Մրանք մարդիկ են, որոնք ապրել են Փարիզում, նրանք կոչվում էին Ֆիլիպ, Ռոլան, Ռոբեր, Մոնիկա կամ գուցե Իրեն, կամ գուցե Մարկ:

Մնում ենք մի կողմում, մթության մեջ: Նա մրմնջում է.

— Այո ... նրանք գոյություն են ունեցել. Ֆիլիպը, Ռոլանը, Ռոբերը, Մոնիկան, Իրենը... Մարկը:

— Եկեք, նրանք մեզանից առաջ են անցել:

Մեր քայլերն արձագանքում են այս չարաշուք միջանցքում: Վերջապես՝ ելքը: Լույսը վախով սահում է աստիճանների վրայով: Նա վերջին հայացքն է նետում ետ, հետո դանդաղ բարձրանում: Դրսում արևը կուրացնում է: Սրճարանում նստած մարդիկ ապերետիվ են խմում: Իրենը մտասույզ, լուռ քայլում է: Ինձ հետ մտնում է ռեստորան, նստում է և, երբ մենյուն են ներկայացնում նրան, ցնցվում է:

— Պատվիրեք ինձ համար: Ես քաղցած չեմ:

Պաղ կերակուրներ և գարեջուր են պատվիրում: Իր պատառաքաղով պոմիդորի մի շերտ է վերցնում, առանց ախորժակի տանում բերանը: Հետո մի ուրիշ շերտ է վերցնում: Մի պատառ հաց է կտրում, թաթախում ձեթի և քացախի մեջ, վերցնում գարեջրի բաժակը, կիսով չափ խմում, մաքրում շրթունքների փրփուրը և վերսկսում ուտել: Այս փոքրիկ մանրամասներն ինձ հուսադրում են: Նա լավ նախաճաշում է, խմում սուրճը, ընդունում իմ հրամցրած ծխախոտը: Ծխի երեք քուլա թողնելուց հետո ասում է.

— Մարկի մոտ ենք վերադառն^ում:

— Քիչ հետո: Մի պահ մոռացեք նրան:

Մարդիկ են անցնում, լողափի պայուսակներով: Հավանաբար, լողավազան են գնում: Իրենը, նախաճաշի ընթացքում հանդարտված, ընդհատում է ծխելը, խուսափող հայացք նետում հանքային ջրով լի իմ բաժակին:

— Գնում ենք:

Նա հանգցնում է ծխախոտը և վեր կենում: Մենք տեղավորվում ենք խիստ տաքացած մեքենայում:

— Երաժշտություն կուզե՞ք:

Նրան տալիս են տրանզիստորը, որը ընկերս է բերել ՆյուՅորքից և, որը ծխախոտի սուսփից փոքր է: Նա պտտում է կոճակներից մեկը:

— Մա թողե՛մ:

PDF Eraser Free

Թեթև երաժշտություն է, ոչ տհաճ: Հարցնում եմ նրան, թե սիրո՞ւմ է դասական երաժշտություն: Նա մտածում է և ասում.

— Մոցարտ:

— Իսկ Բեթհովե՞ն, Բա՞խ...

— Մոցարտ:

Նա այդ ասում է նույն համառությամբ, երբ արտասանում էր.

— Մարկ:

Մոնպառնասում, ուղիղ գնալու փոխարեն, թեքվում եմ աջ: Անցնում եմ մի քանի փոքրիկ փողոցներ և կանգնում մի նրբանցքում, հիվանդանոցի առջև:

— Ընկերակցեք ինձ: Ես պետք է պաշտոնակցիս տեսնեմ:

Հնազանդորեն իջնում է մեքենայից: Կաթուղիկ քույրերի առաջնորդությամբ մտնում ենք հիվանդանոց: Միջանցքը տխուր է և մութ: Մտնում ենք վերելակ: Յուրաքանչյուր հարկում, ճաղերի արանքից նկատում ենք անկողիններին երկարած հիվանդների: Վերելակը հինգերորդ հարկում կանգնում է:

— Այստեղ է:

Իմ գործակիցը բացակա է: Ավելի լավ: Իրենին տանում եմ շենքի ձախ թևը: Կանգնում եմ մի մեծ սրահի առջև: Մոտ քսան մահճակալ: Ամեն տարիքի մարդ կա: Ոմանք պառկած են, ոմանք նստած իրենց անկողինին: Ես հեռվից բարեկամաբար ողջունում եմ լրագրեր բաժանող բուժքրոջը:

— Մա քաղցկեղով հիվանդների սրահն է:

Իրենի աչքերը կկոցվում են:

— Նրանք այդ գիտե՞ն:

— Մեծ մասը:

Հիվանդները մեր մուտքն ընդունում են առանց զարմանքի: Նրանիցի մի քանիսին ճանաչում եմ: Ես փնտրում եմ Դանիելի աչքերը՝ քսան տարեկան մի երիտասարդ՝ սպիտակարյունությամբ հիվանդ: Կոթնեղ է պատուհանին: Ձեռքս դնում եմ նրա մեջքին: Դանդաղ շրջվում է և, Իրենին տեսնելով, կարմրում:

— Ես քեզ ներկայացնում եմ Իրենին: Նրա ամուսինը մեքենայի վթարի է ենթարկվել: Նա իմ կլինիկայում է:

Դանիելը վեհերոտ մեկնում է ձեռքը: Իրենը չի ժպտում, սեղմում է մեկնած ձեռքը: Նրա աչքերը զննում են հիվանդի աղջկական դեմքը: Երևի Դանիելի սարսափելի հիվանդության տեսանելի հետքերն է փնտրում:

— Ազգականներդ այս քանի օրը եկա՞ն քեզ տեսության:

PDF Eraser Free

— Մորաքրոջս աղջիկը քիչ առաջ այստեղ էր:

Տասը ամիս է, ինչ հիվանդանոցում է: Սկզբում նրա ծնողներն ամեն օր տեսակցության էին գալիս: Այժմ քեռորդիների հերթն է: Մայրն ամեն անգամ այցելելիս, նրա նիհարությունը տեսնելով, հազիվ է զսպում արցունքները: Հայրն ու եղբայրները աշխատում են արվարձաններում: Իրենց կիրակին հերթով տրամադրում են նրան: Դանիելը մատներով հարդարում է մազերը:

— Կարծում էի, թե ամբողջ ամառ անձրևելու է...

Մի քանի րոպե խոսում եմ նրա հետ: Իրենը ոչինչ չի ասում: Դանիելը մտնում է անկողին և գիրք վերցնում ձեռքը:

Մի ծերուկ ինձ մոտենալու նշան է անում: Նա կոկորդի քաղցկեղ ունի: Աչքերը տարօրինակ կերպով փայլում են նրա դիակային դեմքին: Նա շշնջում է.

— Դե ինչ, ի՞նչ պետք է լինի ինձ հետ:

Նա խոխոսացնում է, օդը ներս քաշում, մի քանի անգամ խոնարհելով գլուխը, որպեսզի օդի հոսանքն ավելի լավ խլի:

— Նրանք ինձ վիրահատել չեն ուզում, ինչո՞ւ:

Ուժասպառ ընկնում է բարձին, փակում աչքերը և կարծես մոռանում իմ ներկայությունը: Իրենին տանում եմ դեպի պատուհանը: Ինչոր սարսուռներ են անցնում նրա դեմքով: Նա հուզված է:

— Դանիելը բուժվելո՞ւ է:

— Դանիելը մահանալու է: Նա մոմի պես դանդաղ պիտի հանգչի, ինչպես բոլոր տղամարդիկ, որոնց այստեղ տեսնում եք:

Ինձ համար դժվար է այդպես խոսել, բայց պետք է նրան հաշտեցնել մահվան մտքին: Այս առավոտ նա կմախքներ տեսավ: Այժմ նա շփման մեջ է կենդանի կմախքների հետ: Քսան մարդ նրա հետ շնչում են նույն օդը: Կարող է նրանց հետ զրուցել, հարցեր տալ, դատարկ բաներից խոսել:

— Իրոք ոչ մի փրկություն չկա՞:

— Առայժմ՝ ոչ:

— Նրանք տանջվո՞ւմ են:

— Սրկսումներով հանգստացնում ենք:

— Դա անմարդկային է:

Լռություն:

— Նրանք գիտե՞ն, որ մեռնելու են:

— Հույսով են ապրում: Բայց մեծ մասը գիտե:

PDF Eraser Free

— Գնանք: Գնանք:

Երբ դուրս էինք գալիս հիվանդանոցից, նա ասաց.

— Երբ Մարկն առողջանա, Դանիելին տեսության կգանք:

Կլինիկայում տիկին Կորբյեն հարցնում է ինձ.

— Մարկ Դյումանի հետ ի՞նչ անենք:

Այս պատմությունը նրան վշտացնում է, բայց նա հասկանում է ինձ:

— Եվս մի քանի օր համբերեք:

Մարմինը սառույցի մեջ է: Մնում է վարչական գլխացավանքը: Ես դա կդասավորեմ:

— Ի՞նչ է անում տիկին Դյումանը:

— Առաջադիմում է: Նա վերջապես ուզեց նստել: Հանդեսներ է կարդում:

— Ասացեք, որ նրան ուզում եմ տեսնել:

Իրենը մտնում է աշխատասենյակ: Ձեռքին մի կիսացաք հանդես ունի:

— Վեցն անց կես է: Երեք ժամ է, ինչ միջանցքում եք: Ձեր ներկայությունը Մարկին չի բուժի:

Չի պատասխանում, դեմքին ոչ մի մկան չի շարժվում: Ես կուզեի, որ նա վերադառնար տուն, ընտելանար իր ամուսնու բացակայության մտքին:

— Գնացեք մի պտույտ արեք անտառում: Հետո... Հա... Շանգելիզեի թատրոնում այսօր համերգ կա: Կուզե՞ք ինձ ընկերանալ:

— Այնքան էլ չեմ ուզում, բժիշկ:

— Ես ուզում եմ: Հիմա մի տաքսի կկանչեմ, տուն կգնաք, զգեստը կփոխեք, իսկ ես երեկոյան ժամը իննին կգամ ձեր ետևից:

Ու որովհետև տատանվում է, ես վճռականորեն ավելացնում եմ.

— Հուսով եմ, որ չեք մերժի: Ես ճշտապահ կլինեմ:

Նա ծածկում է հանդեսը, պատրաստվում հեռանալ:

— Տաքսի մի կանչեք: Ուզում եմ զբոսնել:

— Կեցցեք: Մինչև երեկո:

Պատուհանից տեսնում եմ, որ դուրս է գալիս կլինիկայից: Դա արդեն հաջողություն է:

Այս ժամին Սյուզանը պետք է որ ծովափում լինի: Հավանաբար, հիմա ծովային հեծանիվ է քշում: Մի սիգարեթ եմ վառում ու խորասուզվում գրառումներիս մեջ: Այդ խորհրդակցությունն ինձ ավելի ու ավելի է ոգևորում: Հարյուր տարի առաջ ինչպե՞ս

PDF Eraser Free

Էին վիրաբույժներն առանց թմրեցման վիրահատում: Հիվանդին կապում էին, անդամահատում, մասնատում ու խարանում շիկացած երկաթով: Ես կխոսեմ Ժան Միլվիայի մասին, որն առանց արյունահոսության միզափամփուշտից քարեր է հեռացրել:

Կես ժամ անց, տիկին Կորբյեն մտնում է աշխատասենյակ:

— Քիչ առաջ տիկին Դյումանին հարևան փողոցի բարում տեսա:

— Ի՞նչ էր անում:

— Ոչինչ: Կլինիկան էր հսկում:

— Քիչ հետո կխոսեմ նրա հետ: Ամեն ինչ կարգի՞ն է:

— «Յ»ը այս առավոտ ոտքի կանգնեց: Թերթեր է պահանջում:

— Թող համբերի մի քանի օր: Ես նրան վաղն առավոտյան կնայեմ: Իսկ մյուսնե՞րը:

— Ոչ մի բարդություն: Ոմն պարոն Մ. դը Շահան զանգահարեց: Կարո՞ղ եք այս շաբաթ ընդունել:

— Արձակուրդից հետո:

Շարունակում եմ իմ գրառումները:

Իննին տասնհինգ պակաս դուրս եմ գալիս կլինիկայից: Օդը քաղցր է, բուրավետ: Գիշերը համեստորեն ջնջում է ծառերը: Նստարանի վրա սիրահարները համբուրվում են: Ավտոմեքենա նստելիս, մտածում եմ Մարկ Դյումանի վթարահար մեքենայի մասին: Որտե՞ղ է: Իրենը այդ մասին չի մտահոգվում: Վաղը կզանգահարեմ ոստիկանություն, կիմանամ մանրամասները:

Ընթացքի եմ գցում մեքենան և թեքվում ձախ: Ահա և Իրենը: Նստած է մի դատարկ բաժակի առջև: Լավ եղանակին «Պուլենի» տերը սեղաններն ու աթոռները տեղավորում է մայթի վրա: Նրա այցելուներն անգործ նու դյուրին աղջիկներն են:

— Ինչո՞ւ տուն չգանցիք:

Բնագղաբար բարձրացնում եմ գլուխս: Այդպես էլ կասկածում էի: Մարկի սենյակի պատուհաններն այստեղից երևում են: Իրենը ելնում է:

— Չգիտեմ, պարզ պատասխանում է նա:

Նախատինքի խոսքերը կուտակվում են շրթունքներիս: Սակայն լռում եմ: Ի՞նչ օգուտ: Գուցե ես էլ նրա պես վարվեի: Մի՞թե ես չեմ միակ մեղավորը: Ես նրան օրորում եմ իմ ստով: Նրա վերաբերմունքը բնական է:

— Նստեք:

PDF Eraser Free

Բացում եմ դուրը: Նստում է: Շարժվում ենք Շանգեյի ռոդոլոյամբ: Նա զբոսնողներին, մեքենաներին, աֆիշներին ոչ մի ուշադրություն չի դարձնում. նստել է ուղիղ, խաչած ձեռքերով, չտեսնող աչքերով: Նրա անթափանց հայացքը ոչինչ չի արտահայտում, և դա անհանգստացնում է ինձ: Հասնելով նրա տուն, հարցնում եմ, թե չի ցանկանում արդյոք զգեստափոխվել:

— Չեմ ուզում ներս մտնել:

Չեմ ստիպում և բռնում եմ թատրոնի ճամփան: Համերգը կես ժամից հետո սկսվելու է: Ծրագրում՝ Բախ, Բեթհովեն, Մալեր: Չնայած արձակուրդներին, հոժ գանգված է շարժվում դեպի տոմսարկղը: Իրենին տանում եմ դիմացի բարը: Տղաները, մանեքենները սրահով մեկ ցրված ճաշում են: Տեղավորվում ենք մի անկյունում: Մեծ գոհունակությամբ նկատում եմ, որ Իրենը վերցնում է մենյուն և ուշադրությամբ զննում:

— Պոմիդորի սալաթ եմ ուզում և կանաչիով ձվածեղ:

— Եվ գարեջուր:

— Այո, մի գավաթ:

Նա հանգիստ, գլուխը հակած իր ափսեին, ճաշում է: Վերջացնելով բիֆշտեքսը, Իրենի հայացքն եմ բռնում՝ ուղղված մի մարդու: Նա սևեռուն նայում է, հետո ասում.

— Մարկի շարժումները հիշեցնող մի շարժում տեսա:

•

Համերգը սկսվում է Մալերի չորրորդ սիմֆոնիայով, որը ես շատ եմ գնահատում: Դահլիճում ասեղ զցելու տեղ չկա: Իրենը ուշադրությամբ լսում է, ասես հայտնության է սպասում: Առաջին մասը կարծես հետաքրքրում է նրան: Հետո, նա շարժվում է բազկաթոռի մեջ: Իսկապես, առաջին անգամ լսելով, Մալերին դժվար է հետևել մինչև վերջ: Երևի Բեթհովենն ավելի դուր կգա: Ընդամիջմանը նրան բար եմ հրավիրում: Նայելով անցնող դեկորացիաներին, ասում է.

— Գուցե պետք էր ուրիշ շրջագգեստ հագնել:

Նա շրթունքները թրջում է բաժակից և ավելացնում.

— Մինչև Մարկը կլինիկայից դուրս չգա, շրջագգեստս չեմ փոխի:

Վերադառնում ենք մեր տեղը: Բեթհովենը և Բախը նրան չեն հասնում: Այսպիսի զգայուն էակի անտարբերությունը անհասկանլի է: Մի երկու հարց եմ տալիս: Պատասխանում է.

— Այս դահլիճում պետք է կենտրոնանալ: Բեթհովենից մի քանի կտորներ ոգևորում են, բայց չեն ցնցում: Մոցարտը, տանը լսելիս, հանգստացնում է: Նա ինձ բավարարում է:

PDF Eraser Free

Ուղեկցում եմ նրան շուկա: Մեքենան կանգնեցնում եմ և քայլում ենք: Արկղերը դարսված են մայթի վրա: Պտուղները շոգից փտում են: Տապակած կարտոֆիլը ճթված է ձեռքի մեջ: Մի կլոշար, մայթին փռված, ձեռքը գլխի տակ, մեծ ախորժակով ախորժակով փտած պոմիդոր է ուտում և լեզվով որսում հոսող հյութը: Մեզ տեսնելով, նա ժպտում է մի խոսուն ժպիտով, ինչոր բան քրթմնջում և հռհռում:

Մտնում ենք միջանցքի նմանվող մի բիստրո: Բարձրախոսը խլացնող երաժշտություն է հաղորդում: Լաքայոտ շորերով մսագործները կարմիր գինի են հրանցնում իրար: Տիրուհին մի սանդվիչ է կրծում, միաժամանակ մատուցում այցելուներին: Բոլորը խոսում են բարձր և միասին: Այնպիսի մթնոլորտ է տիրում, որը գուցե թմերցնի Իրենին: Սակայն սխալվում եմ: Նա լարված նստում է, չի խմում, սպասում է: Հեռանում ենք:

— Վերադառնում եք կլինիկա՞:

— Գնում եմ տուն: Ուշ է:

— Կլինիկայի մոտ ինձ իջեցրեք:

Արագացնում եմ ընթացքը: Դեպի Ալեգիա: Նա ասում է:

— Այսօր առանց բողոքելու, ամենուր հետևեցի ձեզ: Այդ շնորհիվ ինչո՞ւ ինձ չեք տալիս: Ես չեմ ուզում տուն գնալ:

Հասնում ենք: Բացում եմ դռնակը: Փողոցն ամայի է:

— Խոհեմ եղեք, Իրեն:

Նա վարանում է, ապա իջնում:

— Բարի գիշեր: Վաղը կգանգահարեմ ձեզ:

Մեր բաժանումը մի քիչ անսպասելի է կատարվում: Շանգէլիզեի վրա թույլ եմ տալիս ինձ տերրասներից մեկը վայելելու: Ծխամորձի ժամն է: Տուն վերադառնալու համար, բռնում եմ կլինիկայի ճամփան: Ամեն ինչ խաղաղ է: Լույսերը մարած են: Թեքվում եմ ձախ և, հանկարծ, «Պուլենում» նկատում եմ Իրենին: Նստել է մի դատարկ բաժակի առջև: Առանց զարմանքի նշույլ արտահայտելու տեսնում է, թե ինչպես եմ իջնում մեքենայից: Երկու կին, բարձր աթոռներին թառած, գրուցում են ինչոր ճաղատ մարդու հետ: Պարի հրապարակում մի ամերիկացի սպա պարում է մի շիկահեր աղջկա հետ: Բարմենը կոկտեյլ է պատրաստում:

— Ամբողջ գիշեր այստե՞ղ պիտի մնաք:

Ինձ չի պատասխանում, չի նայում անգամ:

— Երեխայի պես եք ձեզ պահում: Եկեք:

Նա բարձրացնում է գլուխը:

— Ես չեմ կարող տուն վերադառնալ: Չեմ կարող:

PDF Eraser Free

— Լսեք ինձ...

Ի՞նչ ասել նրան: Ինձ զիանթափված եմ զգում և ավելի ու ավելի մեղավոր:

Ստիպում եմ նրան մեքենա նստել և տանում եմ տուն:

— Դուք այստեղ կքնեք: Կլողանաք: Գրքեր կան: Սառնարանում միրգ կա: Ես կվերադառնամ կլինիկա: Վաղն առավոտյան կգամ ձեր ետևից:

Մնում է սնեյակի մեջտեղը կանգնած, անորոշության մեջ: Ես նրան ժամանակ չեմ տալիս մտածելու և հեռանում եմ:

Իմ աշխատասենյակում շատ հարմար մի բազմոց կա: Պառկելուց առաջ, վերհիշում եմ օրվա անցածը:

Իրեն Դյումանը տեղի տվեց: Նա նախաճաշեց, ճաշեց, մասնակցեց համերգին: Շատ փոքր արդյունք է, եթե նկատի առնենք այն, որ նա կարծում է, որ իր ամուսինը ողջ է:

Արդյոք ժամանակն է ճշմարտությունը ասելու, թե պետք է մի քանի օր էլ սպասել:

Կմտածեմ:

Վաղը:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

Ինձ համարձակ և միաժամանակ միամիտ է թվում կյանքի հաճույքների ծրագիր կազմելը և այն որպես հենարան աստիճանաբար Իրենին առաջարկելը: Հիմա նրա միակ հաճույքը Մարկի առողջանալն է: Այնուամենայնիվ, հույսս չեմ կտրում, որ մինչև մահվան լուրը հայտնելը, կկարողանամ նրա գիտակցության մեջ վերականգնել կյանքի մանրուքները: Հույսս չեմ կտրում, որ այս քանի օրվա ընթացքում նրան վերափոխված կտեսնեմ: Ուզում եմ, որ ամուսնու մահը չընդունի որպես իր համար անդարմանելի մի բան: Կյանքի հաճույքները և հույսի արմատները կազմված են հազար ու մի արտասովոր մանրուքներից. արևի մի ճառագայթ, մի կրկներգ, մի սովորույթ: Իրենը գուցե որևէ գիրք ընթերցելով գտնի կյանքի իմաստը. գիտական մի սկզբունքի վերլուծման, աստղաբաշխության կամ մի պարտեզի մեջ: Երկրի շուրջը պտտվող արհեստական արբանյակի կամ ավելի շուտ՝ մի սերմի զննությամբ, որը կարող է ծառ դառանալ:

•

Ժամը տասն է: Դուրս եմ գալիս կլինիկայից, որպեսզի գնամ փնտրեմ նրան: Դռնապանուհին Սյուզանի նամակն է տալիս ինձ: Հետո կկարդամ: Զանգում եմ: Ոչ ոք չի պատասխանում: Դեռ քնած է: Երկրորդ անգամ եմ զանգում: Ապա որոշում եմ օգտվել իմ բանալիից: Ննջարանի դուռը բաց է: Ոչ ոք չկա: Իրենը գնացել է: Մահճակալի վրա դեռ մնացել են նրա մարմնի հետքերը: Հավաքում եմ համարը:

PDF Eraser Free

Պատասխան չկա: Ուրեմն որտե՞ղ է: Կլինիկայո՞ւմ: Նորից նստում եմ մեքենա և նկատում, որ Ալեգիայիյ ուղղությամբ եմ վերցրել: Մի դատարկ փողոց եմ հասնում: Շանգէլիզեից բացի, Փարիզն այս շրջանում լքված քաղաքի է նման:

— Տիկին Դյումանին, խնդրեմ:

— Երկրորդ հարկ, դեպի ձախ, պատասխանում է դռնապանուհին:

Հնաոճ մի շենք է: Վերելակ եմ մտնում: Դռան վրա մի տախտակ է փակցված. «Մարկ Դյուման, ինժեներ»: Ջանգում եմ: Դուռը հանկարծակի բացվում է: Իրենը շնչահեղձ, ցավատանջ և հույսով լի հայացքով նայում է ինձ, ասես շեմին իր ամուսնուն էր տեսնելու:

— Կարո՞ղ եմ ներս գալ:

Մտնում եմ կոկետորեն կահավորված մի սենյակ: Պատից նկարներ են կախված: Հեռուստացույց: Երկու փափուկ բազկաթոռ: Մարկի լուսանկարը չկա: Սեղանի վրա մի մեծ ծխամորձ կա, հսկայական մոխրաման, հրահան, ծխախոտ և «AutoJournal»: Կարգուկանոն: Միայն Մարկն է պակասում: Իրենը լուռ գնում է ինձ:

— Ինչո՞ւ եք փախել իմ մոտից:

— Վախեցա:

— Ինչի՞ց:

— Ձեր բնակարանից:

Լռում է, հետո հարցնում:

— Մարկը այս առավոտ լա՞վ էր:

— Վատ էր: Նրա վնասվածքը լուրջ է: Կարծում եմ, որ դուք մի փոքր համոզված եք դրանում...

Ձեռքի բռնած թերթը ոլորում է, չար նայում ինձ, ասես ես եմ պատասխանատու այդ վնասվածքի համար, ապա դուրս է գալիս սենյակից:

Երկու բոպե անց նրա ձայնը խոհանոցից է հնչում.

— Ձեզ համար սուրճ եմ պատրաստում:

Մի գավաթ սուրճ է բերում: նա հանգստացած դեմք ունի: Ես նրա ուշադրությունն եմ հրավիրում հեռուստացույցի ծրագրի վրա:

— Այս ամիս առանձնապես մի բան չկա, ասում է նա: Անցյալ ամիս լավ հաղորդումներ կային: Այս շաբաթվա ծրագիրը չեմ գնել, որովհետև արձակուրդ պետք է գնայինք:

Հագին նույն սպիտակ շրջագգեստն է:

— Դեպի Կոտ դ՝Ազյո՞ւր:

PDF Eraser Free

— Իսպանիա: Անցյալ տարի...

Լռում է: Ես նրան ասում եմ, որ իմ կինը Նիցցայում է և վեր եմ կենում:

— Դուք պետք է ձեր իրերի դասավորությունը փոխեք:

— Ինչո՞ւ:

— Ձեզ կթվա, թե նոր կահույք եք գնել:

Նա դիտում է սնեյակը:

— Այս դասավորությունը ինձ դուր է գալիս: Մենք օրեր ենք կորցրել յուրաքանչյուր կահույքի տեղն ընտրելու համար:

Չեմ պնդում: Նա կարճ ժամանակով անհետանում է և վերադառնում մի փոքր ճամպրուկով:

— Ես ձեզ հետ կգամ կլինիկա:

Ցույց է տալիս ճամպրուկը:

— Մարկի համար սպիտակեղեն եմ վրեցրել:

•

Մինչև կլինիկա հասնելը, նրան տանում եմ Մոնպառնասի մոտ գտնվող հիվանդանոցը:

— Գնում ենք քաղցկեղով հիվանդներին տեսնելո՞ւ:

Հանկարծ նկատում եմ, որ սկսել է հարցեր տալ: Առաջին օրվա հարմությունը կորչում է: Դա լավ նշան է:

Անցնում ենք նախասրահը:

— Երեկ դուք ընտելացաք մահվան պատկերին: Այսօր մի հուզող տեսարանի ներկա կլինեք:

Դուռը հրում եմ և նրան դեմ առ դեմ բերում մի պառկած կնոջ, որը շնչահեղձ է լինում: Նրա կողքին բուժքույր է նստած և մի երիտասարդ բժիշկ, որին ճանաչում եմ: Իրենը չի հասկանում, բայց կնոջ արձակած ցավի առաջին իսկ աղաղակից նրա դեմքի մկանները կծկվում են: Կինը, որ պետք է ծննդաբերի, երիտասարդ է՝ քսաներկու տարեկան: Քրտինքի խոշոր կաթիլներ հոսում են նրա վզով: Իրենը բռունցքները սեղմած, հմայված նայում է նրան:

Բժիշկը քաշում է սավանը, նայում, դառնում ինձ: Գոհ է: Ամեն ինչ նորմալ է: Բուժքրոջ ձայնը խզում է լռությունը:

— Ուժ տո՛ւր:

Մի խոպոտ աղաղակ է դուրս թռչում ծննդաբերողի կոկորդից:

— Ուժ տուր, ուժ տուր...

PDF Eraser Free

Իրենը մեկ կնոջ դեմքին է նայում, մեկ ոտքերին: Հետո մի տագնապալի հայացք է նետում ինձ: Ես շնչում եմ.

— Հանգստացեք, ամեն ինչ լավ է գնում: Նայեք, ինչ արտասովոր է...

Բուժքույրը թաշկինակով սրբում է կնոջ դեմքը: Հետո սիրտ տախս նրան.

— Ուժ տուր, ավելի ուժ տուր...

Իրենը հմայված է: Թերահավատության մի լույս է անցնում նրա աչքերով: այդ ուռած փորը մարդ կծնի՞ արդյոք: Կինը գլուխն աջ ու ձախ է դարձնում: Նա ամբողջ ուժերը լարել է: Իրենը շունչը կտրած տեսնում է, թե ինչպես է հայտնվում գլուխը, հետո ուտերը, հետո ոտքերը: Տղա է:

— Եկեք:

Տանում եմ սպասասրահ:

— Ինչ պարզ է, ինչ պարզ այս ամբողջը, ասում է նա:

Ու հանկարծ որոշում է.

— Ես երեխաներ կունենամ:

Կլինիկայում ես զիջում եմ նրա համառությանը: Նա ուզում է Մարկին տեսնել: Ուրեմն կտեսնի: Բացում եմ դուռը: Մենյակը թաղված է կիսախավարի մեջ: Արհեստական սառեցման սիստեմը գործում է, որպեսզի մարմինը պահպանվի: Իրենը ճամպրուկը դնում է մի անկյունում և մոտեցնում մահճակալին: Ամուսնու գլուխը՝ հսկայական վիրակապով փաթաթած, երևում է ծածկոցի տակից: Անկողնի վրա թթվածնի բարձ կա: Ի զարմանս ինձ, նա ասում է.

— Ինձ թվում է, թե նա լավացել է:

Մի թե այդ աստիճան կույր է: Որքա՞ն ինչլագար է հույսը: Եթե նույնիսկ Մարկի գլուխը կիսված լինի, բավական է, որ ես ասեմ, թե Մարկը ողջ է, որպեսզի նա հավատա:

— Դուրս գանք:

Նա մնում է սպասասրահում: Տիկին Կորբյեի ուղեկցությամբ գնում եմ հիվանդներին տեսնելու: Նա հարցնում է, թե երկա՞ր եմ պահելու Մարկին, թե անարխործություններ չեն լինի՞, քանի որ պետք է հայտարարեինք մահվան մասին:

— Երկու օր էլ համբերենք:

Մտազբաղ, անցնում մեմ Իրենի առջևից: Մի հանդես ձեռքին, նա ննջում է: Կուրծքը կանոնավոր իջնում և բարձրանում է: Դեմքը հանդարտված է: Հանկարծ հիշում եմ կնոջս: Սյուզանին գնացքում ծանոթացա: Իրենի պես ննջում էր՝ ձեռքը դրած ուստիկանական վեպի էջին: Իմ աշխատասենյակում Սյուզանի նամակն եմ կարդում:

PDF Eraser Free

Նա նկարագրում է Նիցցայում անցկացրած իր առաջին օրը: Մանրամասներով: Եղանակը, ծովը, կազինոն: Եկող չորեքշաբթի նրա հետ կլինեմ:

Դուռը հանկարծ բացվում է: Հայտնվում է Իրենը՝ այլայլված դեմքով.

— Մարկը ...

Մի թե ճշմարտությունն է իմացել: Թուրքը կուլ է տալիս ու շարունակում ավելի հանգիստ տոնով.

— Բժի՛շկ, Մարկը վեր է կացել:

Մյուզանի նամակը դնում եմ դարակը և պատուհանը լրիվ բացում:

— Հենց նոր նկատեցի: Նա դուրս եկավ սենյակից: Եկեք:

— Նրան տեսա՞ք սենյակից դուրս գալիս:

— Հենց նոր: Նա դուռը կամաց փակեց:

— Գնանք տեսնենք:

Բռնակը պտտելիս մի անհերթեթ տագնապ է պատում ինձ: Արհեստական քուն... ծիծաղելի է: Իսկապես, արձակուրդի կարիք ունեմ:

— Կտեսնեք, որ սխալվել եք:

Սենյակում ամեն ինչ կարգին է: Մարկը նույն դրությամբ պառկած է: Ամեն ինչ իր տեղում է: Իրենը տարակուսանքի մեջ ասում է.

— Այնուամենայնիվ ես տեսա, որ անկողնազգեստով և գլուխը վիրակապով փաթաթված մի մարդ դուրս եկավ: Նա քայլեց դեպի միջանցքի ծայրը...

— Դուք երազ եք տեսել, դա բնական է: Դուք ննջում էիք ձեր աթոռին նստած: Սակայն, եկեք ինձ հետ:

Ես նրան տանում եմ սպասասրահի ծայրում գտնվող բուժքույրերի սենյակը: Հիվանդանոցից մեկը, որին անցած շաբաթ վիրահատել էի, մրգահյութ է խմում և զրուցում բուժքրոջ հետ: Այդպես էլ կարծում էի: Հենց այնտեղից դուրս գալիս էլ նրան տեսել է Իրենը:

— Իմ բոլոր հիվանդները գլխներին վիրակապ ունեն: Եկեք գնանք նախաձաշենք և քայլենք: Դուք հանգստի կարիք ունեք:

Տարակուսած, անխոս և հնազանդ հետևում է ինձ:

•

Բայար փողոցի մեջտեղում կանգնում է:

— Այս փողոցը գիտեմ:

PDF Eraser Free

Նայում է տներին և շոտլանդական եկեղեցուն: Որոնում է: Բառերը խառնվում են նրա շրթունքներին:

— Հիշում եմ ... անցած տարի էր... Մարկի հետ այս եկեղեցու դիմացն էինք:

Ձեռքը դնում է պատին:

— Ուրբաթ օր էր: Ի՞նչ էինք անում այստեղ: Հա՛, եկել էի Շանգելիզեի խանութներից մեկում մի շրջագգեստ նալելու: Մարկին ժամադրություն էի նշանակել ՌոնՊուանի վրա: Մենք դեռ մեքենա չունեինք: Երկու ժամ էր անցել, և դեռ չէինք որոշել ռեստորան մտնել: Հետո պատահաբար այս փողոցը մտանք: Մոված էինք, բայց ուզում էինք այս կողմերում մնալ: Մարկը մտավ մի խանութ... Տեսե՛ք, խանութը դեռ բաց է:

Իտալական խանութ է: Քիանտիի շշերը տերոդորմյայի պես շարված են:

— Հետո՞:

— Մարկը մտավ ներս: Ես սպասեցի դրսում: Նա գնեց երկու շերտ խոզապուխտ, պանիր, վարունգ և նուշով կարկանդակ: Եվ մի շիշ քիանտի...

Նա կանգնում է սառած, անուժ, հիշողությունների մեջ կորած: Մի տարօրինակ միտք է անցնում գլխովս: Մտնում եմ խանութ: Գնում եմ երկու շերտ խոզապուխտ, պանիր, վարունգ, երկու կարկանդակ և մի շիշ քիանտի:

— Հետո՞:

Նա չի նկատում իմ ծանրաբեռնված ձեռքերը և շարունակում է.

— Մենք քայլեցինք, կանգ առանք հրապարակում:

Ես նայում եմ Ֆրանսուա Առաջինի հրապարակի շատրվաններին: Իրենը շարունակում է.

— Հայկական եկեղեցին որտե՞ղ է: Այստեղ է... Չորս, թե հինգ եկեղեցի կա այս հրապարակի շուրջը: Հետո քայլեցինք ... Մարկը ոչինչ չէր ասում... Նա շոգից հանել էր բաճկոնը:

Այժմն նա հույզով է խոսում: ԺանԳուժոն փողոցը դատարկ է, արևից թուլացած:

— Կտրեցինք ավենյուն, որ հասնենք Սենայի ափ:

Ես նրան ուղեկցում եմ գետափ: Տուրիստներով լցված մի փոքր նավ սահում է ջրի վրայով: Մի ջահել աղջիկ է վազում՝ ետևից իր հաճող շունը: Մի նկարիչ նկարում է: Իրենը ցույց է տալիս նստարանը: Նստում ենք:

— Անցյալ տարի էր... Ժամանակը ի՞նչ արագ է գնում... Մենք նախաճաշեցինք այս նստարանի վրա:

Ես բացում եմ փոքրիկ փաթեթները: Նրան տալիս եմ մի շերտ խոզապուխտ: Վերցնում է և մեքենայորեն ուտում: Մեկնում եմ շիշը: Խմում է շից: Հետո, մի կտոր պանիր է կրծում: Իսկ ես ուտում եմ առանց ախորժակի: Նա ելնում է:

PDF Eraser Free

— Մենք շիշը նետեցինք Սենա: Լողում էր ջրի երեսին...

Նա վերցրեց շիշը, բայց շարտելու փոխարեն մոտեցավ ափին և նրբորեն դրեց ջրի վրա:

— Հետո՞:

— Ու բռնեցինք նույն ճամփան:

Մենք նորից անցնում ենք ԺանԳուստոն, Բայար փողոցներով, Մոնտեն ավենյուով, ՌոնՊուանով: Նա ոչինչ չի խոսում: Հասնելով մի կինոթատրոնի, ասում է.

— Ես մտա սրճարաններից մեկը: Նա գործնական ժամադրություն ուներ: Ես ուզում էի Շանգէլիզեում մնալ: Պայմանավորվեցինք, որ ժամը վեցին Մարինյանում կգա ինձ միանալու: Այդ օրը մի նկար տեսա Ֆերնանդելի մասնակցությամբ:

Ես նրան տանում եմ կինոթատրոն: Տոմս եմ վերցնում:

Նա մեքենայաբար մտնում է դահլիճ: Մի պահ մնում եմ անորոշության մեջ: Թվում է, թե երազի մեջ եմ: Վերադառնում եմ կլինիկա:

•

Ժամը վեցին Իրենին գտնում եմ Մարինյանում: Սրահի խորքում նստած է:

— Եկեք տերրաս:

Ափսոսանքով թողնում է իր տեղը: Համարյա բոլոր սեղանները զբաղված են: Ամերիկացի մի սպայի մոտ երկու աթոռ ենք գտնում: Հաճելի եղանակ է: Բազմամարդ ամբոխը զբոսնում է Շանգէլիզեով:

— Պաղպաղակ կուզե՞ք:

Գլխով է անում: Քառորդ ժամ հետո ես նրան հարցնում եմ.

— Դուք բարկացա՞՞ծ եք: Ինչո՞ւ չեք խոսում:

Նա մի ակնթարթ նայում է աչքերիս մեջ, հետո հայացքը շրջում, համառորեն մեխում դիմացի թերթերի կրպակին: Ես մի թերթ եմ գնում և խորասուզվում ընթերցանության մեջ: Գլուխս բարձրացնելով՝ նրա հայացքն եմ բռնում որդղված ինձ: Նա բերանը բաց է անում, կարծես ուզում է ինչոր բան խոստովանել: Հետո հրաժարվում է: Ես մտածում եմ Մորեստի մասին, որը մի քանի օր հետո գալու է Լիոնից: Հասնելով այստեղ, նա դիակը չի տեսնի: Որոշվա՛ծ է: Ելնում եմ: Քայլելու ցանկություն ունեմ: Իրենը, որ հետևում է շարժումներիս, ասում է.

— Մի քիչ էլ մնացեք:

— Եկեք քայլենք:

PDF Eraser Free

Ելնում է: Զգում եմ, որ ուզում է խոստովանություն կատարել, բայց վարանում է: Չեմ ստիպում:

— Այնցյալ տարի ի՞նչ արեցիք կինոյից հետո:

Նա փակում է աչքերը:

— Կինոյից հետո՞. Մարկը եկավ ինձ մոտ... Հետո... Եկեք...

Այս անգամ ես եմ հետևում նրան: Իջնում ենք Շանգիլիզե: Հասնում ենք Կոնկորդ հրապարակ: Ո՞ւր է տանում ինձ: Նա քայլում է արագ, լայն քայլերով, հպարտ տեսքով, որը կոշտացնում է նրա դիմագծերը: Անցնում ենք կամուրջը, թեքվում ձախ: Նորից ձախ: Դելինյի լողավազանը: Առանց վարանելու մտնում է, մոտենում դրամարկդին և երկու տոմս ուզում:

Լողավազանը լցված է մարդկանցով: Աղջիկներն ու տղաները լողում են, պարում, երգում: Իրենը ուղղվում է ռեստորան:

— Ահա՛:

Նստում ենք լողորդների դիմաց: Մարդիկ իրար հրմշտում են աշտարակի վրա: Իրենը մի տեսակ կատաղած ասում է.

— Մենք այստեղ ճաշեցինք:

Հետո լռում է: Նա այլևս ոչ մի բառ չի ասի: Ժամը ութին վեր է կենում: Վերադառնում ենք Շանգիլիզե: Նա նստում է նստարանին և մի հայացք գցում ջրի ցայտերին: Հնազանդորեն հետևում եմ: Այս երեկո ես նրան կհայտնեմ Մարկի մահը: Գաղտնիք ինձ ճնշում է:

Ժամը ինն անց կես ելնում է և ինձ տանում գնչուական մի կաբարե: Սրահը համարյա դատարկ է: Մի քանի գույգ դեսուդեն նստած հանգիստ ճաշում են: Երաժիշտները նվագում են, շատախոսում, հոհոռում: Մետր դ՛օթելը նայում է ժամացույցին: Իրենը հրաժարվում է ճաշել, բայց երեք գավաթ շամպայն է խմում:

Նորից նրա հայացքն եմ բռնում՝ ուղղված ինձ: Նվագախումբը մի գողջրիկ եղանակ է նվագում: Զութակները լալիս են: Սրահը լցված է ծխով: Իրենը գավաթը բռնել է ափերի մեջ:

— Մարկն իմ պատճառով վթարի ենթարկվեց:

Մի պահ լռելուց հետո շարունակում է.

— Մեքենան նոր էինք գնել: Ամեն օր մեքենայով գնում էր խճուղու վրա թափառելու: Երբեմն ես նրան ուղեկցում էի: Այն առավոտ...

Այցելուներ եկան: Մետր դ՛օթելը նրանց մենյու է ներկայացնում:

— Այն առավոտ մենք մի փոքր վիճեցինք... դատարկ բանի վրա: Նա տնից դուրս եկավ առանց ինձ համբուրելու: Ես նրան հետևում էի պատուհանից և, երբ տեսա, որ

PDF Eraser Free

մեքենա է նստում, նշան արեցի, որ սպասի... Դուք հիմա կծիծաղեք վրաս... Իջա, որ համբուրեմ նրան: Հետո նա գնաց: Տեսնո՞ւմ եք, իմ մեղքով է: Եթե նրան չուշացնեի, հիմա ողջ և առողջ կլինեք:

Շամպայն եմ լցնում, որ խմի: Շատ թուլացած է երևում:

— Ձեր մեղքով չէ, Իրեն: Ճակատագիրն է:

Նա բարձրացրեց աչքերը.

— Այդպե՞ս եք կարծում...

— Համոզված եղեք: Եթե նա ուրիշ ճամփա բռներ... Եթե ծխախոտ գներ: Եթե ավելի ուշ վեր կացած լինեք, եթե ավելի շուտ պառկած լինեք... մոռացե՛ք այդ պատմությունը և ասե՛ք, թե այսօր ինչ եք տեսել:

Դանդաղ դատարկում է բաժակը: Երաժիշտները շրջապատում են մեզ:

— Ֆերնանդելի մասնակցությամբ մի կինոնկար:

— Դա անցյալ տարի էր:

— Այսօր ես մի նկար տեսա Ֆերնանդելի մասնակցությամբ: Այնցյալ տարի նույնպես:

Հարբած է: Հիմա ես ներկայացումների ծրագիրը կնայեմ:

Նա հառաչում է.

— Ի՛նչ լավ են նվագում: Լսեք... կարծես ամանակը կանգնել է: Կարծես տարիներն իրար են խառնվել: Կարծես հանց նոր հանդիպել եմ Մարկին: Կարծես զբոսնում ենք Սենայի ափին: Շշից գինի ենք խմում և շիշը շպրտում Սենա: Կարծես...

Նա արդեն չափն անցնում է: Նյարդերը թուլացած, գլուխը ետ գցած, անշարժ նստել է: Նրա շրթունքների միջով մի թույլ շշնոջոց է սահում, որը նախադասություն չի դառնում: Երաժիշտները մի ուրիշ սեղան են շրջապատում: Մի քանի զույգ մեղմորեն պարում են:

— Մարկ...

Տագնապած նայում եմ Իրենին: Քնած է: Հաշիվը փակում եմ և տանում դուրս: Ամուր պահում եմ, որովհետև ոտքերը ծալվում են:

— Տարբի՛:

Տալիս եմ նրա հասցեն: Մեքենայի մեջ գլուխը դնում է ուսիս և քնում: Իսկ ես ուզում էի Մարկի մահը հայտնել: Վաղը կասեմ:

Բարձրանում եմ իր սենյակը: Ուշ է: Պայուսակից բանալին հանում եմ և դուռը բացում: Նրա բնակարանում խոնավություն կա: Լույսը վառում եմ: Երկու բազկաթոռով, ծխամորճով, Մարկի ամսագրով լցված այս սենյակը շատ տխուր է երևում ինձ: Իրենին թողնում եմ բազկաթոռի վրա: Նա խորը քնի մեջ տնքում է: Մի

PDF Eraser Free

դուռ եմ բացում: Ննջարանն է: Սենյակի կենտրոնում բազմոց կա, կողքին՝ փոքրիկ սեղան: Բազկաթոռին տղամարդու գիշերազգեստ է դրված: Կա նաև ծխամորձ և տեխնիկական թերթեր: Մարկն ամենուր է: Գլխովս մի միտք է անցնում: Առանց երկարքարակ մտածելու գործում եմ: Փոխում եմ բազմոցի տեղը: Փոքրիկ սեղանը դնում եմ պատուհանի մոտ: Պահարանը հրում եմ մի անկյուն, ծխամորձը, թերթերը, գիշերազգեստը վերցնում եմ և դասավորում դարակում, կարծես ուզում եմ վերացնել Մարկի հետքերը:

Զգում եմ, որ կարգին քրտնել եմ: Սենյակում Իրենը նույն դիրքով քնած է: Զգուշորեն վերցնում եմ նրան և պառկեցնում մահճակալին: Կոշիկները հանում եմ, սավանով ծածկում:

Գիշերվա ժամը մեկն է:

Կլինիկայում կքնեմ:

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

Մի մղձավանջային երազ խոռվում է քունս: Մարկը մտնում է իմ աշխատասենյակը և խնդրում, որ Իրենին փորձելու համար հայտնեմ իր մահվան լուրը: Զարթնում եմ քրտինքի մեջ կորած: Արևը կուրացնում է: Սպասում եմ տիկին Կորբյեին: Նա ժամը տասին գալիս է կլինիկա: Կանչում եմ նրան, որպեսզի Մարկի վերաբերյալ հրահանգներ տամ: Վարչական գործերով կզբաղվեմ վաղը: Իրենին կհայտնեմ: Պետք է մտածել դագաղի մասին: Տիկին Կորբյեն կզբաղվի դրանով: Կաթոլիկ քույրերը աղջիկների մի խումբ են առաջնորդում դեպի ատնառ: Նրանց ծիծաղն ու աղաղակները կարծես էկրանի միջով հասնեն ինձ: Սյուզանը սպասում է զանգի: Վաղը կզանգահարեմ:

Նստում եմ սեղանիս առջև, որպեսզի մի երկար նամակ գրեմ Իրենին և հաղորդեմ ամուսնու մահը: Վերցնում եմ գրիչը, բայց ձեռքս անշարժանում է սպիտակ թղթի վրա: Նամակ գրելը, դրոշմանիշ կպցնելը, և փոստարկղի մեջ գցելը շատ հեշտ է: Հավաքում եմ նրա հեռախոսի համարը և, նրա ձայնը լսելով, շատ եմ զարմանում:

— Գիշերը լավ քնեցի՞ք:

— Ես պետք է ներողություն խնդրեմ ձեզնից երեկվա համար: Շատ էի հոգնած: Կահույքի տեղը ինչո՞ւ եք փոխել:

— Այդպես ավելի լավ չէ՞: Տարիներ ի վեր դուք զարթնում եք միևնույն անկյունում: Սովորույթը ձեզ կկործանի:

— Մարկն ինչպե՞ս է այս առավոտ:

PDF Eraser Free

— Վատ: Նրա վիճակը չի լավանում: Ո՛չ, կլինիկա մի եկեք: Այցելությունները արգելել են: Ինձ սպասեք ձեր տանը: Քառորդ ժամից կլինեմ այդտեղ: Ես ձեզ կբացատրեմ:

•

Դուռը բաց է: Իրենը նստել է պատուհանի մոտ: Ինձ տեսնելով, դիրքը չի փոխում:

— Իսկապես ի՞նչ է կատարվում նրա հետ: Ինչո՞ւ որևէ բան չեք անում:

Նա խոսում է հանգիստ, գրեթե համակարպված մարդու ձայնով: Միզարեթ են վառում և ծուխը փչում առաստաղին: Նա շարունակում է.

— Ի վերջո, նա կառողջանա՛: Դուրս կգա՛ կլինիկայից:

Լռություն: Պատուհանի առջևից թռչուններն են անցնում: Հանգցնում են սիգարեթը:

— Ի՞նչ էիք անում նախքան Մարկի հետ ծանոթանալը:

Իմ ձայնը թեթևակի դողում է, բայց նա չի նկատում: Բարձրացնում է գլուխը, նայում ինձ, հետո շրջում հայացքը:

— Մարկից առա՞ջ: Ոչինչ:

Եվ անմիջապես:

— Ինչո՞ւ եք այդ հարցը տալիս:

— Ես ձեզ ասել եմ: Մարկը ծանր վիճակում է: Դուք չէիք կարող մի որոշ ժամանակ... մոռանալ նրան: Պատասխանեք ինձ, Իրեն: Մարկի հետ ծանոթանալուց առաջ դուք ի՞նչ էիք անում:

Նա բարձրանում է ձեռքը, կարծես բողոքելու համար, բայց անմիջապես իջեցնում է:

— Զգիտեմ:

— Ո՞ւմ էիք հանդիպում: Ի՞նչ կյանք էիք վարում: Դուք շարունակ նույն տանը չեք ապրել՝ Ալեգիա փողոցում: Դուք ուրիշ մարդկանց եք ճանաչել... հիշեցեք:

— Ես մի մարդ գիտեի: Մեծահոգի, սիրալիր... Նա հաճախ միևնույն բառերն էր գործածում... Երբ մտահոգեված էր լինում, ոտքը գցում էր ոտքին: Նրա անունն ինձ դուր էր գալիս. Մարկ: Ուրիշ ի՞նչ եք ուզում իմանալ:

— Այդ Մարկին ճանաչելուց առաջ, դուք... Վերջապես աշխատե՞լ եք, եղե՞լ եք բարեկամների շրջանում, մի որևէ թաղամասում:

Նա անտարբեր ասում է.

— Մոնպառնասում: Ես աշխատում էի մի հրատարակչությունում:

PDF Eraser Free

— Գնանք Մոնպառնաս: Ցույց տվեք ինձ այդ թաղամասը:

— Գնանք կլինիկա:

Նա ինձ զինաթափ է անում: Նայում եմ շուրջս և հանկարծ ինձ հարց տալիս. խնայողություններ ունի՞ արդյոք: Ինչպե՞ս է ապրելու այսուհետ: Հավանաբար ստիպված կլինի աշխատել:

— Ո՞ր հրատարակչի մոտ էիք:

— Ռընյեի: Մի տարի եմ աշխատել: Զբաղվում էի նկարագրարդումներով:

Ռընյեն գիտական գրքերի հրատարակիչ է: Տնօրեններից մեկին ճանաչում եմ: Բելլարին... Ալեն Բելլարին:

— Իրեն: Իսկ եթե ստիպված լինեք աշխատել...

— Ինչո՞ւ: Մարկը ինձեներ է: Նա լավ գործի վրա է և չի ոգում, որ ես աշխատեմ: Մենք խնայողություններ չունենք, բայց ...

— Ենթադրենք, թե առաջիկա մի քանի ամիսը նա չկարողանա աշխատել: Ի՞նչ կանեք:

— Չգիտեմ: Գուցե աշխատեմ: Մեր խնայողություններով այդ մեքենան գնեցինք...

Նորից լռություն: Պատուհանից շրջիկ վաճառականներ են երևում: Նրանք վիճում են իրար հետ: Գնորդները շատ հազվադեպ են:

Իրենը կանգնում է, արագ նայում է հայելուն, մատները քսում է աչքերի տակի կնճիռներին, կարծես ուզում է ջնջել դրանք, և ասում.

— Ուզո՞ւմ եք Մոնպառնասը տեսնել: Եկեք...

Գնում ենք Մոնպառնաս: Նա ինձ առաջնորդում է մի փոքրիկ, արևոտ փողոց:

— Գրանդ Շումիեր փողոցն է սա: Այստեղ եմ նկարել սովորել:

Մտնում ենք խավար և փոշոտ նախասրահը: Իրենը մի դուռ է բացում: Մոտ քսան հոգի ածխամատիտով նկարում են: Երկյուղած լռություն է տիրում: Նա շշնջում է.

— Ես ամեն օր գալիս էի այստեղ: Այդ ժամանակ Մարկին դեռ չէի ճանաչում:

Ես նրան հարցնում եմ.

— Նկարելու ցանկություն չունե՞ք:

Մի քանի գլուխներ դառնում են մեր կողմը: Լում ենք:

— Շարունակ նույն բնորոշուհին է:

Մոտ երեսուն տարեկան մի կին, ձեռքերը կրծքին խաչած, նստել է աթոռին:

— Ոչինչ չի փոխվել: Ոչինչ, ոչինչ...

PDF Eraser Free

Նա այդ ասում է մի տեսակ անհուսությամբ: Բացում է պայուսակը, գտնում մատիտը, հենցում աթոռի մեջքին:

— Ձախ կողմը՝ լուսամուտի մոտ, թղթեր կային և մի ստվարաթուղթ:

Նա գլուխը չի շրջում: Ես նայում եմ ու տեսնում սպիտակ թղթերը և ստվարաթղթերը: Երկու թերթ եմ վերցնում նրա համար: Թղթերը դնում է գրակալին: Ձեռքը վարանում է: Ուշադիր դիտում է բնորոշումը: Մատիտը սկսում է ցատկոտել թղթի վրա: Շուտով նա խորասուզվում է աշխատանքի մեջ: Ես հեռու եմ քաշվում, որպեսզի չխանգարեմ նրան: Իրենը նյարդային շարժումներով, արագ նկարում է: Քառորդ ժամ հետո նրա ձեռքը կանգ է առնում: Նա անշարժ է: Արդյոք նորից կսկսի՞ նկարել: Նրա մեջքի ոչ մի մկանը չի դողում: Որոշում եմ մոտենալ: Բնորոշում մարմինը հարազատորեն վերարտադրված է. փոքրիկ կուրծքը, փոս ընկած որովայնը, ազդրերը, խաչած թևերը, բայց գլուծը... Մարկի գլուխն է:

•
— Մենք ամեն օր խմբով գալիս էինք այստեղ:

«Գմբեթը»: Կապույտ ջինս հագած աղջիկները և մորուքավոր տղաները նստած զովացուցիչ են խմում: Իրենը սպիտակ մազերով մի մարդու է ցույց տալիս, որը սեղանից սեղան է շրջում և առաջարկում դիմանկարել:

— Նայեք նրան: Բոլորովին չի փոխվել: Ի՛նչ արագ է անցնում ժամանակը:

Բաժանը դնում է շրթունքներին:

— Ինձ թվում է, թե դեռ երեկ էր այն ամբողջ կյանքը, որ Մարկից առաջ ունեի ես: Մարկի հետ ամուսնությունից հետո առաջին անգամ է, որ մտնում եմ այս թաղամասը, թեև այստեղից հեռու չենք ապրում:

— Ձեզից է կախված ձեր անցյալի հետ կապ վերահաստատելը, նկարելը...

Նա շարժում է գլուխը.

— Առաջվա ոգևորությունն այլևս չեմ զգում: Երկու ժամ է զբոսնում ենք Մոնպարնասում, և ինձ թվում է, թե կեղծում եմ: Այս թաղամասն այլևս ինձ չի պատկանում: Երբեմն մի տեսակ կարոտ եմ զգում... Ո՛չ, իսկապես, ես այնքան հուզված չեմ, որքան կուզեի լինել: Իհարկե, հիշատակները հորդում են, սակայն այստեղ վարած կյանքից հետո ես ուրիշ ուրախություններ ապրեցի, ուրիշ հիշատակներ ամբարեցի: Գնա՞նք:

•

PDF Eraser Free

Այնուամենայնիվ «Գմբեթից» դուրս գալիս, կանգ է առնում մի պատկերասրահի առջև և ասում.

— Այս պատկերասրահը...

Նա իր միտքը չի ավարտում: Մոնպառնասը որպես թակարդ առաջարկում էմ նրան, հուսալով, որ մի քանի մանրուքով կկապեն անցյալին: Վերջին անգամ, երբ կանգնել է այդ պատկերասրահի առջև, Մարկին դեռ ծանոթ չի եղել: Նա երջանիկ է եղել, եռանդով լի: Ես փորձարկումն անում եմ առանց հավատալու: Բայց, ո՞վ գիտե: Մարկի մահն իմանալով, գուցե նորից գա այս թաղամասը, փորձի կապվել անցյալին, ինքն իրեն համոզի, որ Մարկից առաջ երջանիկ է եղել: Վերքն ավելի շուտ կսպիանա, ես համոզված եմ:

Նախաճաշում ենք նկարիչների ռեստորանում, հետո, պատահականորեն, հասնում այն հրատարակչության շենքը, որտեղ նա աշխատում էր: Մտնում ենք բակ: Իրենը լիաթոք շնչում է:

— Հնձած խոտի նույն բույրը:

Նա ցույց է տալիս առաջին հարկի պատուհանը:

— Սա իմ սենյակն էր: Ես նկարում էի և զբաղվում հրատարակման գործով:

— Չէիք ուզի՞ նույն տեղը գրավել:

Ջարմացած նայում է ինձ.

— Ինչո՞ւ:

— Եթե դուք խնայողություններ չունեք, ստիպված կլինեք աշխատել:

— Իսկ Մա՞րկը:

— Նա առաջիկա ամիսներին չի կարող աշխատել...

Նրա դիմագծերը հանկարծակի կծկվում են:

— Չի խանգարի... գլխի վնասվածքը նրան չի խանգարի...

— Ո՞րն էք գերադասում: Խելագարվելը, թե՞ մահը:

— Ոչ... ոչ, նա լրիվ կբուժվի:

Հանկարծ Իրենը կորցնում է հավասարակշռությունը: Ոտքերը ծավլում են: Ճիշտ ժամանակին պահում եմ նրան:

— Ձեզ ի՞նչ պատահեց: Հո երբեխա՞ չեք:

— Թողեք ինձ... Գնում եմ Մարկին տեսնելու: Աղաչում եմ ձեզ: Ուզում եմ հենց հիմա տեսնել: Ես կարծեցի, թե նրա գլխի վնասվածքը... Ոչ, դա սարսափելի է, դա անհնար է: Մի բան ասեք ինձ:

— Եկեք:

PDF Eraser Free

Դռան առջև, ինձ ծանոթ տնօրենը, ձեռքով նշան է անում մեզ: Ճանաչել է: Իրենը լուռ է:

— Ինչպե՞ս եք, բժիշկ: Բայց սա մադոնազել Հիլերն է...

Երկու բառով բացատրում եմ նրա ամուսնուն պատահած աղետը: Նա մեզ հրավիրում է իր սենյակը՝ միմի բաժակ խմելու: Իրենն անտարբեր նստում է աթոռին: Սեղանի վրա թղթապանակներ և ձեռագրեր կան: Ալեն Բելլարը հանում է բաժակները և մի շիշ բացում:

— Դուք գիտե՞ք, որ նկարչի կարիք ունենք:

Քառորդ ժամ անց, Իրենը մտնում է գրքերով լցված իր նախկին սենյակը: Նստում է սեղանի առջև, կարծես ուզում է անցյալը վերակենդանացնել: Մի մատիտ է վերցնում և նկարում: Բելլարն ասում է նրան.

— Այստեղ մնալը միայն ձեզնից է կախված: Ի՞նչ կարծիքի եք այդ մասին:

Իրենը վերցնում է թղթապանակը, լայն բացում աչքերը, կարծես համոզվելու համար, որ երագում չէ: Ես սեղանին եմ թողնում հեռուստատեսության ծրագիրը:

— Այս երեկո մի հետաքրքիր հաղորդում կա: Վաղն առավոտյան կզանգեմ:

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Զանգահարում եմ Ալեն Բելլարին: Ամեն ինչ լավ է: Այս առավոտ Իրենը ժամը իննին եկել է գործի և մի գծանկար ավարտելու վրա է: Շատ չի խոսում, բայց աշխատանքը կարծես հետաքրքրում է նրան: Վաղը կհայտնեմ Մարկի մահը: Ի վերջո նա պետք է սպասեր դրան: Այս օրերից հետո, հարվածն այնքան ուժեղ չի լինի: Տիկին Կորբյեն դագաղը պատվիրել է, կեսօրից հետո պատրաստ կլինի: Վաղը կզանգահարեմ Սյուզանին: Իմ դերը գրեթե ավարտված է: Ինքս ինձ հարց եմ տալիս, թե ինչու ընտրեցի այդ դերը, սակայն համոզված եմ, որ իրավունք ունեի այդպես վարվելու:

Կեսօրին գնում եմ սրճարան՝ Իրենին հանդիպելու: Տեսնում եմ, թե ինչպես է դուրս գալիս հրատարակչությունից: Միշտ միևնույն զգեստն է հագին: Վարանում եմ նրա աչքին երևալ: Ինձ թվում է, ավելի լավ է նրան մենակ թողնել: Հեռվից հետևում եմ:

Նա թեքվում է փողոցը, կանգ առնում մի ռեստորանի առջև, կարդում մենյուն, հետո շարունակում քայլել: Մտնում է մի խանութ և շաքարահաց գնում: Միայն թե դեպքերը, աշխատանքը, պատասխանատվությունը կլանեն նրան: Նա երիտասարդ է, և ես համոզված եմ, որ մեկերկու տարի հետո նորից կամուսնանա: Առայժմ, տեսնելով նրան Մոնպարնասում դեգերելիս, անհուն կարեկցանք եմ զգում նրա նկատմամբ: Դիմադրում եմ նրան մոտենալու գայթակղությանը:

PDF Eraser Free

Գրասենյակ չմտած, հեռախոսը զանգահարում է: Նախագգում եմ, որ Իրենն է: Կանչում եմ տիկին Կորբյեին և խնդրում, որ պատասխանի: Իրենն է:

— Ոչ, տիկին, բժիշկն այստեղ չէ: Ուզո՞ւմ եք նրան որևէ բան հաղորդել: Այո՞ :

Տիկին Կորբյեն դնում է լսափողը.

— Անջատեց:

•

Ժամը չորսին զանգահարում է Բելլարը:

— Տիկին Դյումար չի վերադարձել:

— Կեսօրից հետո որևէ անհետաձգելի գործ ունե՞ր:

— Մի շատ հետաքրքիր և խիստ անհետաձգելի աշխատանք: Այս առավոտ առաջարկեցի, որ մեկ ուրիշին վստահի: Հրաժարվեց: Ուզում էր մինչև երեկո ավարտել:

— Շնորհակալություն: Երբ որ գա, ինձ տեղեկացրեք:

Արդյոք որտե՞ղ է: Այս օրերին միայն կլինիկա գալու համար էր դուրս գալիս տնից: Պետք է որ տանը լինի: Անհանգստացած, դուրս եմ գալիս կլինիկայից: Հարցնում եմ «Պուլենի» տիրոջը, արդյոք չի տեսել Իրենին: Նա Իրենին ճանաչում է:

— Այստեղ էր:

— Ե՞րբ:

— Մոտ մեկ ժամ առաջ:

— Ինչպե՞ս էր տրամադրությունը:

— Սովորականի պես: Հանքային ջուր ուզեց և, առանց ձեռք տալու, գանց:

Զանգահարում հրատարակչին: Ոչ: Նա չի վերադարձել: Հավաքում եմ նրա համարը: Զանգ: Մեկ անգամ: Երկու անգամ: Սպասում եմ: Ոչ մի ձայն: Արդյոք որտե՞ղ է: Որոշում եմ գնալ Մոնպառնաս, փնտրել այնտեղ:

Շոգ է: Երկինքը ծածկվում է սպիտակ ամպերով: Մի քանի րոպեում հասնում եմ Մոնպառնաս: Իրենը չկա: Ոչ «Գմբեթում», ո՛չ «Մելեկտում», ո՛չ «Գրանդ Շոմիերում»: Գնում եմ նրա տուն: Մի փոքրիկ գրություն կսահեցնեմ դռան արանքից:

Վերելակում մտքովս անցնում է, որ իմացել է ամուսնու մահը: Դա մտահոգում է ինձ: Զանգում եմ. մարդ չկա: Համառում եմ. ապարդյուն: Ականջս կպցնում եմ դռանը: Անորոշ աղմուկ եմ լսում: Իրենը բնակարանում է: Բռունցքներով ուժգին խփում եմ դռանը:

PDF Eraser Free

— Բացե՛ք, Իրեն:

Ոտնաձայներ են լսվում: Նորից եմ թակում: Քայլերը մոտենում են:

— Բացե՛ք:

Քայլերը կանգ են առնում: Մի հոգնած ձայն.

— Թողեք ինձ, խնդրում եմ: Գնացե՛ք:

— Բացե՛ք...

— Ինչու ինձ հանգիստ չեք թողնում: Թողեք ինձ:

Նա բացում է դուռը: Այլայլված դեմք ունի: Բոլոր պատուհանները փակ են: Ինձ թվում է, թե ժամանակին եմ հասել:

— Դագաղը Մարկի համար է, այնպե՞ս չէ:

Ուրեմն տեսել է: Դագաղը մեկ ժամ առաջ բարձրացրին Ետնամուտքով, որը «Պուլենի» դիմացն է:

— Այլևս փրկելու հույս չկա՞:

Բացում եմ պատուհաններից մեկը: Տաք քամի է ներս մտնում սենյակ: Իրենը համառում է.

— Նրա վիճակը պետք է որ ծանր լինի:

Հանցավոր եմ, որ առաջին օրը ճշմարտությունը թաքցրեցի նրանից: Մի՞ թե իմ բոլոր ճիգերը ապարդյուն են անցել: Անկասկած, քանի որ իմ առջև խորտակված Իրենն է, որը միայն մի ելք է տեսնում. ինքնասպանություն: Այնուամենայնիվ, չեմ ուզում հավատալ, թե միամիտ եմ վարվել: Չեմ ուզում հավատալ, թե կյանքի հետ կապող ոչ մի զգայուն թել չկա Իրենի սրտում: Որտե՞ղ է այդ լարը: Ինչպես ապացուցել, որ նա սխալվում է, որ կյանքը գեղեցիկ է, որ մի օր նա կմոռանա Մարկին:

— Եկեք:

Հանկարծ մի անբացատրելի գայրույթ է հոսում իմ երակներում: Արյունը գլուխս է խփում: Առարկաները շաղվում են աչքիս առջև: Կոպտորեն բռնում եմ Իրենի ձեռքը և իջեցնում աստիճաններով: Նա սայթաքում է: Ի՛նչ փույթ: Բարձրացնում եմ նրան և հրում մեքենայի մեջ: Իմ վարվելակերպը նրան հանկարծակիի է բերում: Առանց մի բառ արտասանելու, ապշահար նայում է ինձ: Ես այլևս չեմ ուզում մտածել, չեմ ուզում հարցեր տալ: Իմ բոլոր լարված զգայարանները կենտրոնացել են միայն մեքենայի վրա. շարժիչի միացում, հաղորդիչ լծակի փոփոխում, սլաքի թեքում: Սրբիկի պես մտնում եմ բուլվար Մոնպառնաս, Շանգէլիզե, Բուլոնյան անտառ: Մի հայացք անգամ չեմ զգում կլինիկայի կողմը: Ահա և խճուղին: Իմ ոտքը սեղմում է ստարտերը: 120, 130, 140: Նորից եմ սեղմում: Միջատները խփվում են ապակուն և ճզմվում: Իրենը, ապշահար, չի շարժվում: Քամին կտրում է շունչս: Ավելի եմ արագացնում: Արագությունով հարբած, անցնում եմ բոլոր մեքենաներից: Գյուղերը տողանցում են:

PDF Eraser Free

Ինձ թվում է, թե ոտքս ձուլվել է ստարտերին: Ղեկն առանց դժվարության սահում է ձեռքերիս մեջ: Ոչ քամին, ոչ էլ արագությունը չեն մեղմում արտառոց կատաղությունը, որ վիրավոր գազանի պես ճանկոծում է կուրծքս: Ո՞ւր ենք գնում: Չգիտեմ: Դողերը հետևում են անվերջ ճանապարհին, հաշվիչը լափում է կիլոմետրերը, բենզինն այրվում է շարժիչի մեջ՝ ինձ չտալով իմ որոնած թեթևությունը: Աղետի գաղափարը մի պահ մտահում է: Այսքան թեթևությամբ դեռ չէի վարել մեքենան: Նորից գյուղեր, ոլորաներ, ծառեր: Չգում եմ, որ մոտիկ է նպատակար:

Դովիլին չհասած, առանձնատներով և այգիներով եզերված մի ճանապարհ եմ բռնում: Ճանապարհի ծայրին, ծովի մոտ, մի հյուղ ունեմ: Շաբաթ և կիրակի օրերը գալիս ենք այստեղ ձուկ որսալու: Ոտքս վերցնում եմ ստարտերից և դնում արգելակիչի վրա: Անիվները ճոնչում են և անշարժանում: Ամբողջ ճանապարհի ընթացքում Իրենը չխոսեց: Իջնում եմ մեքենայից: Երկինքը ծածկված է սպիտակ ամպերով և մի թեթև մշուշ է լողում ծովի վրա: Մեքենայի արկղիկի մեջ խրճիթի բանալին եմ փնտրում: Ի՞նչ եմ անելու այստեղ Իրենի հետ: Իմ ցասումը դեռ չի իջել: Բացում եմ դուռը: Մոտորանավակս անիվների վրա է: Ընդամենը երկու անգամ եմ գործածել: Ցասումը նորից է բռնում ինձ: Միայն մի ելք եմ տեսնում՝ արագություն: Երկու տակառիկ վառելիք եմ վերցնում և նավակը հրում դեպի ծովը:

•

Շարժիչը հագում է, հետո ամբողջ թափով սկսում աշխատել: Մակույկը սահում է ծովի վրայով: Իրենը փոքրիկ խցիկում նստած, նայում է ինձ: Նա սպասում է: Նավակը ջրի երեսին երկար ակոս է թողնում, որն անհետանում է մառախուղի մեջ: Շփոթված ճայերը ճեղքում են օդը և թռչում դեպի ափ: Մի տագնապալից լռություն է պարուրում մեզ: Ժամանակ առ ժամանակ ծովը բարձրացնում է մեր դյուրաբեկ նավակը և ալիքները չոր աղմուկով փշրվում են նրա իրանին:

Ես գործի եմ դնում վերջին փամփուշտը:

— Իրեն, հավատո՞ւմ եք աստծուն:

Լռություն: Նրա հայացքը խստանում է.

— Եթե Մարկը առողջանա, կհավատամ: Եթե ոչ...

Ես խոր շունչ եմ քաշում, կարծես ուզում եմ մեղմել իմ այս անընթաց զայրույթը: Սպասում եմ իմ ձայնին: Եվ այդ ձայնն անվրդով է.

— Մարկը մահացել է:

Իրենը անխոս նայում է ինձ: Հետո շրջում է հայացքը: Նա ելնում է և թեքվում, որպեսզի դուրս գա խցիկից:

Ափն անհետացել է: Մենք մենակ ենք ծովի վրա: Նա անշարժանում է, նայում ջին, որը եռում է պտուտակի տակ: Ես գոռում եմ, այս անգամ կատաղորեն.

— Մարկը մահացել է: Նա մահացած է և թաղված:

PDF Eraser Free

Ոչ մի շարժում: Լսեց ինձ: Ավելի ուժգին եմ գոռում:

— Մարկը մահացել է: Դուք նրան այլևս չեք տեսնի:

Նրա մեջքը դողում է, բայց նա չի շարժվում: Ես գոռում եմ:

— Ջուրը նետվելու համար էլ ինչի՞ եք սպասում: Նետվեցեք, չէ որ Մարկը մեռած է: Ես ձեզ չեմ փրկի և ասին էլ հեռու է: Շուտ արեք, որ այլևս չխոսենք նրա մասին:

Ոչ մի ռեակցիա: Նրա բարակ սիլուետն այլևս չի դողում: Ես վեր եմ կենում, գլուխս դիպչում է տախտակին, մոտենում եմ ու ցնցում նրան:

— Մեռած է և թաղված: Մեռած՝ ինչպես բոլորն են մեռնում: Դագաղը հենց նրա համար էր: Հիմա նա հողի տակ է: Նա մեռած է, ինչպես միլիոնավոր մարդիկ, որ ծնվել և մեռել են: Ինչպես միլիոնավոր մարդիկ, որ ծնվելու են, մեռնելու և փոշի դառնալու: Մահն ինչո՞ւ պիտի խնայեր Մարկին: Ինչո՞ւ, ինչո՞ւ: Մարկն էլ մսից ու արյունից էր: Բացառիկ ի՞նչ ուներ: Այո, նա սիրում էր ձեզ և դուք էլ նրան, հետո՞: Եվ հիմա, եթե կարծում եք, թե Մարկի մահով ամեն ինչ վերջացել է, է՛հ, գնացեք և միացեք նրան: Եթե կարծում եք, թե աստված չկա, զուր է բույսի պես ապրելը: Եթե կարծում եք, թե ավելի հեշտ է հավատալ առաջին մարդուն աշխարհ բերող հրաշքին (օրինակներից մեկն էլ Մարկն էր), քան մահից հետո շարունակվող խորհուրդի գոյությանը, ջուրը նետվեք անմիջապես: Եթե կարծում եք, թե անհնար է մահին մի հնարավորություն տալը, անհետացեք ալիքների մեջ: Նայեք ինձ, միթե՞ ես ապրող գաղտնիք չեմ: Ես շնչում եմ, խոսում եմ, մտածում եմ, հորինում եմ, կյանք եմ տալիս, ես իսկապես կենդանի եմ: Ես անհերքելի ապացույցն եմ մի գաղտնիքի, որը ոչ ոք չի լուծել: Ինչո՞ւ մահն էլ այդպիսին չլինի: Ինչո՞ւ ես մի հնարավորություն չշնորհեմ մահին: Ես ձեզ կբացատրեմ, թե ինչպես է մահացել առաջին մարդը, սակայն անկարող եմ պատմել, թե ինչպես է ծնվել նա: Տեսնո՞ւմ եք, որ մահը պակաս առեղծվածային է, քան կյանքը: Հավատացեք ինձ, Իրեն, Մարկն այնպես չի մահացել, ինչպես դուք եք կարծում: Նա իսպառ չի մահացել: Տարվա բոլոր շաբաթները կրկնվում են: Մարկը փակել է իր շաբաթը: Մի նոր օր է սկսվում նրա համար:

•

Իջնում է գիշերը: Շարժիչը կամաց խոխոտում է: Վառելիքը սպառվել է: Խցիկում երկու թիակ կա: Որտե՞ղ ենք: Չգիտեմ: Ջրի հսկայական տարածություն է մեր շուրջը՝ մառախուղով պարուրված: Իրենը կույզ է եկել խցիկի մի անկյունում: Նա լաց չի լինում: Դիմադրում է արցունքներին: Մի սիգարետ է վերցնում, բայց չի կարողանում վառել: Ձեռքերը դողում են:

— Անցյալ շաբաթ այս ժամին Մարկը նստած էր իմ դիմաց: Մենք ճաշում էինք:

Ես չեմ շարժվում: Իմ ցասումն իջել է:

— Մենք ճաշեցինք և գնացինք կինո: Անցած շաբաթ էր:

Նա լռում է: Մի երկար լռություն: Նրա շնչառությանը հանկարծ դառնում է ընդհատ:

PDF Eraser Free

— Մա շատ անարդար է: Մա շա՛տ անարդար է:

Նա ելնում է, դուրս գալիս խցիկից: Ես տեսնում եմ լացից ցնցվող նրա ուսերը:

•

Գիշեր է: Շարժիչը լռել է: Նավակը ճոճվում է՝ ալիքների քմահաճույքին հանձնված: Ես քնած եմ եղել: Աչքերս բացում եմ և Իրենին չեմ տեսնում: Ինձ թվում է, թե տասը բոպեից ավելի չեմ քնել: Ելնում եմ: Իրենը սահել է ջրի մեջ: Նրա մարմինը լողում է, բայց ձեռքերը դեռ կառչած են շարժիչին: Կռանում եմ, բարձրացնում նրա գլուխը:

Նրա աչքերում ոչ մի լույս չկա: Նա հառաչում է և շշնջում.

— Թողեք ինձ, թողեք ինձ:

Ես նրան բռնում եմ մի ձեռքով, չեմ բարձրացնում:

— Թողեք ինձ:

— Ես կթողնեմ, Իրեն: Բռնեք ձեռքիցս:

Նա չի շարժվում:

— Ձեռքիցս բռնեք, Իրեն: Ձեզանից ընդամենը դա եմ խնդրում:

Նա բարձրացնում է գլուխը: Ես պնդում եմ.

— Իրեն, աղաչում եմ: Հինգ բոպե բռնեք իմ ձեռքից:

Նա զիջում է, և ես ասում եմ նրան:

— Երբ ուզեք, կարող եք թողնել ձեռքս և կսուզվեք: Ես ձեզ այլևս չեմ պահի: Հինգ բոպե ուշադիր լսեք ինձ: Եթե մի սխալ բան ասեմ, թողեք այն ձեռքը, որը բռնել եք:

Ես զգում եմ նրա մատների սեղմումը ձեռքիս վրա: Նա ինձ լսում է.

— Մարկը մի շաբաթ է, ինչ մեռած է: Ես ձեզ չեի կարող ճշմարտությունն ասել: Ուզում էի ձեզ վարժեցնել մահվան գաղափարին: Ուզում էի ձեզ ապացուցել, որ կյանքը գեղեցիկ է: Ես նկատեցի, դուք այնպես եք հաշտվել մահվան գաղափարին, որ առանց ավստոսանքի ուզում եք մեռնել, քանի որ Մարկը մեռած է: Ես ձեզ պարզ ասում եմ. դուք իրավունք չունեք ձեր քմահաճույքով մեռնելու, քանի որ կյանքն իրավունքներ ունի ձեզ վրա: Դուք ձեր կամքով չեք ծնվել: Դուք իրավունք չունեք խրոխտանալու մահվան դեմ: Նայեք ձեր շուրջը. ամեն ինչ ներդաշնակ է: Եղանակներն ամեն տարի կրկնվում են, ցերեկից հետո գիշերն է գալիս: Եթե իմ խոսքերն անհեթեթ են, թողեք ինձ: Եթե ուզում եք այդ ներդաշնակությունը խախտել, հանձնեք ձեզ ալիքներին: Հենց այս պահին ձեր շուրջն ամեն ինչ հրաշալի է, վեր է մեր բանականությունից: Բավական է բերանս բացեմ, որպեսզի մի հրաշք կատարվի: Ես հիմա դժվարանում եմ ընտրել: Այս ծովը և ձեր շուրջը լողացող ձկները հրաշք են: Այս մակույկը, որ լողում է մշուշի մեջ, հրաշք է: Իմ ձայնի հնչյունները, որ թափանցում են

PDF Eraser Free

ձեր ուղեղը, հրաշք են: Ձեր մտությունը, որ զգում էք իմ ձեռքից, հրաշք է: Եթե կարծում եք, որ իմ խոսքերը սուտ են, բաց թողեք իմ ձեռքը: Մարկը մեկնեք մի աշխարհ, որն անծանոթ է մեզ: Բայց այդ անտեսանելի աշխարհը նույնքան իրական ու ճշմարիտ է, որքան մեզ շրջապատող օդը, որքան առաջին տղամարդը, որ պատկեց առաջին կնոջ հետ և, որի ապացույցն ենք մենք: Ես ձեզ ասացի: Մի նոր օր է սկսվում Մարկի համար: Ո՛չ երկուշաբթի, ո՛չ երեքշաբթի, ո՛չ կիրակի: Դա շաբաթվա ութերորդ օրն է: Եվ այդ օրը պատկանում է արարչին: Դա մեզ համար պահված մի անակնկալ է: Եվ որքան էլ մեծ լինի այդ օրն իմանալու մեր անհամբերությունը, մենք իրավունք չունենք դեպի այնտեղ տանող թելը կտրելու: Եթե կարծում եք, թե իմ խոսքերը որևէ հիմքից զուրկ են, բաց թողեք ձեռքս:

•
Լույսը բացվում է՝ առանց փարատելու մշուշը: Այլակները խշշում են քամու քմահաճույքին թողնված նավակի շուրջ: Իրենը դեռ քնած է: Ես այլևս ո՛չ խոսելու, ո՛չ շարժվելու, ո՛չ էլ մտածելու որևէ ցանկություն չունեմ:

Վերջապես բացում է աչքերը: Աչքերին թափված մազերը ձեռքով տանում է մի կողմ:

— Ծարավ եմ:

Չեմ պատասխանում: Նա ելնում է, նայում շուրջը:

— Քաղցած եմ:

Ոչ խմելու բան կա, ոչ ուտելու: Ճարելու հույս էլ չկա: Միայն թիակներ կան:

Նա ելնում է, փորձում աշխատեցնել շարժիչը: Ապարդյուն: Ցնցում է բենզինի տակաոթիկները: Դատարկ են: Վհատված նորից նախկին դիրքն է ընդունում և փակում աչքերը:

•
Ամբողջ օրը մնում է պատկած: Երբեմն բացում է աչքերը, ձեռքերը զննում, փոխում դիրքը:

Իջնում է երեկոն: Իրենը շշնջում է.

— Ծարավ եմ:

Նա զննում է շարժիչը: Դիտում է ծովն ու մշուշը: Պագում է, նայում և վեր կենում: Մի վերջին վարանումից հետո, վերցնում է թիակները և հարմարեցնում:

— Խմելու ոչինչ չկա՞:

Նա թիավարում է, բայց ծովը դիմադրում է: Հինգ րոպե անց դադարում է թիավարել:

PDF Eraser Free

•
Մեկ ժամ հետո մատները թրջում է ջրի մեջ և նորից թիավարում: Դիմագծերը լարումից կծկված են: Մակույկն առաջ է շարժվում: Քառորդ ժամ հետո շնչասպառ, նորից է կանգ առնում:

— Ի՞նչ եք կարծում՝ ավից հետո՞ւ ենք:

Ես մի անորոշ շարժում եմ անում: Նորից է թիավարում: Բայց ծովը դիմադրում է: Նրա շարժումները ոչ կանոնավոր են, ոչ էլ գորեղ: Նա դադարում է ու նորից սկսում: Սկզբում թիակները հազիվ են քսվում ջրի մակերեսին, հետո, աստիճանաբար, խորանում են: Նա արդեն գիտի գաղտնիքը: Մակույկը նվազ ճիգով, ներդաշնակ սահում է:

Մագերը քրտինքից կպել են դեմքին: Խոր շունչ է քաշում և շարունակում է թիավարել:

— Հասնելուց հետո կիսմեմ:

•
Պետք է որ կեսգիշեր լինի: Իրենը թիակները գցում է, ուժասպառ ընկնում նստարանին: Ես ելնում եմ, որպեսզի ոտքերիս թմրությունը ցրեմ: Իրենը նշան է անում:

— Չթիավարեք:

Չնայած ծայրահեղ հոգնածությանը, նստում է թիակների մոտ:

— Ես կհասնեմ:

Եվ կատաղորեն սկսում է թիավարել:

•
Որքա՞ն ժամանակ է, որ թիավարում է: Քանի անգամ նրա մկանները լարվածությունից կծկվեցին:

Ես չեի կարծում, թե նա այսքան արիություն կունենա:

PDF Eraser Free

•
— Հենց որ Փարիզ հասնեն, կփոխեն կահույքի տեղը:

Թիակները խրվում են ջրի մեջ: Որպեսզի շնչասպառ չլինի, նա բերանը փակում է և արագ ու ընդհատ շնչում քթով:

— Ամեն շաբաթ համերգ կգնամ:

Քրտինքը ծորում է նրա դեմքով, մշուշելով աչքերը: Թիակները կատաղորեն ճեղքում են ալիքները:

— Աշխատանք կգտնեն:

•
Լուսաբաց է: Իրենը ամբողջ գիշեր թիավարում էր: Նա ելնում է, նայում մշուշից կծկված հորիզոնին: Ափը չի երևում: Անտրտունջ գրավում է իր տեղը, և ես նկատում եմ, որ նրա ձեռքերը արյունոտ են: Հետո ի՞նչ: Բռնում է թիակները և ուսերը շարժում: Մակույկը շարունակում է սահել:

— Մի օր էլ երեխաներ կունենամ:

Անկարող լինելով բռնել զույգ թիակը, նա այժմ մի թիակով է պայքարում: Եռանդով խրում է ջրի մեջ և ուժգին ետ քաշում:

Մի ժամ հետո մառախուղը սկսում է ցրվել: Պտտվում են ճայերը: Ափը մոտ է:

Իրենը թիակվարում է կանգնած: Երկու ժամ անց նա ճչում է.

— Ա՛փը:

Եվ մի շաբաթից ի վեր լարված նրա դեմքին բացվում է առաջին ժպիտը:

Ուզում եմ խոսել, բայց բառերը թաղված են մնում սրտումս: